

ՆՈՌ ԶՈՒՂԱ



ՏԵՂԵԿԱՏՈՒ ՄՊԱՏԱՆԻ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ

Ժ. ՏԱՐԻ, ԹԻԲ 89, ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ 2012



«ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ
ԿՈՉՈՒԱԾ Է ԻՐ ՀԱՒԱՏՔԻ
ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԾԱԻԱԼ ՈՒ
ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ՏԱԼՈՒ»



Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոս

2012 թվականի մարտին, Անթիլիասի Մայրավանքում, Վեհափառ Հայրապետի նախագահութեամբ յաջորդաբար տեղի ունեցան Ազգային Կենտրոնական Վարչութեան Կրօնական եւ Քաղաքական Ժողովների լիակատար նիստեր, Թեմակալ Առաջնորդների, ազգային իշխանութիւնների ներկայացուցիչների եւ Ազգային Կենտրոնական Վարչութեան միացեալ հանդիպումներ, Վեհափառ Հայրապետի հետ թեմերի ներկայացուցիչների առանձին հանդիպումներ, ինչպէս նաեւ միաբանական հաւաք: Յիշեալ հանդիպումներին Վեհափառ Հայրապետը կարեւորութեամբ շեշտեց թէ՛ ա) Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնն իր էութեամբ, գոյութեամբ ու նպատակով ծառայութիւն է մեր ժողովրդին: Հետեւաբար, այն իր ծառայութիւնը պէտք է վերարժեւորումի ու վերածրագրումի ենթարկի մնայուն կերպով՝ համաձայն մեր ժողովրդի կարիքների, նոր մարտահրաւէրների եւ յարափոփոխ պայմանների: բ) Մեր եկեղեցին ժողովրդի՝ եկեղեցին է՝ ժողովրդի հաւաքական կեանքի մէջ է, որ այն ինքն իրեն պէտք է իրագործի որպէս ծառայութիւն: գ) Հոգեւորականն ու աշխարհականը կոչւած են սերտ ու ներդաշնակ գործակցութեամբ նոր կենսունակութիւն տալու եկեղեցու ծառայութեանը: Այս գիտակցութեամբ է գործում Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը: դ) Թափանցիկութիւնը եւ հաշտութիւնը մեր Սուրբ Աթոռի գործի էական յատկանիշներն են: Ղրանք երբեք չպէտք է սոււեր տեսնեն: ե) Կաթողիկոսարան-թեմ ամբողջական գործակցութիւնը խիստ կենսական է, որովհետեւ Կաթողիկոսութիւնը մէկ ամբողջութիւն է:

Ստորեւ ամփոփ գծերով ներկայացնում ենք մէկ շաբաթ տեւած ժողովական աշխատանքների ամենից յատկանշական կէտերը:-

1. Ժողովական աշխատանքների մէկ կարեւոր բաժինը յատկացւեց թեմերից եկող մտահոգութիւններին եւ առաջադրանքներին: Թելադրեց թեմերին, որ իրենց ներքին դրւածքի ու պայմանների համապատասխան դիմեն այնպիսի քայլերի, որով կարելի լինի գաղութների ներքին միասնականութիւնը ամրապնդել, ժողովրդի կարիքներին ընդառաջել, երիտասարդութեանը յատուկ կարեւորութիւն տալ, հայ դպրոցը կանգուն պահել եւ մեր հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքների տարածման կոչւած եկեղեցու առաքելութեանը նոր աշխուժութիւն տալ:

2. Կրօնական եւ հայեցի դաստիարակութիւնը միշտ նկատելի առաջնահերթութիւն: Այս ուղղութեամբ մեր թեմերի կողմից կատարուող աշխատանքները գնահատելի են: Սակայն, հարկ է վերատեսութեան ենթարկել ցարդ որդեգրւած մօտեցումները, մեթոդներն ու առաջնահերթութիւնները, որպէսզի մարդակերտման ու հայակերտման աշխատանքը դառնայ աւելի ազդու եւ գրաւիչ:

3. Հարկ է յատուկ կարեւորութիւն ընծայել երիտասարդութեանը, որովհետեւ այն կազմում է մեր ազգի ու եկեղեցու կեանքի առանցքը: Այնպիսի ծրագրեր հարկ է մշակել երիտասարդութեան համար, որոնք լինեն համահունչ մեր արժէքների ու մեզ շրջապատող պայմաններին: Այս շրջանակի մէջ շեշտեց Հայաստանեայց Եկեղեցու Հայ Ուսանողական Միութեան (ՀԵՀՈՍ) վերակազմակերպելու եւ նախկին ՀԵՀՈՍ-ականներին գործի թեյուղ կարեւորութիւնը:

4. Մեր եկեղեցու կեանքում մօտիկից հետեւել հոգեւոր շարժումների գործունէութեանը, նրանք մեր եկեղեցու անմիջական հովանու տակ պահելով, եւ ընդհանրապէս քաջալերելով հոգեւոր արժէքների տարածումը մեր ժողովրդի կեանքում:



5. Շուրջ տասնհինգ տարիներ առաջ ընթացք ստացած Աստուածաշնչի արեւմտահայերէնի թարգմանելու աշխատանքը արագացնել, որպէսզի կարելի լինի մօտ ապագային Աստուածաշնչի ամբողջական հրատարակութիւնը իրագործել մեր Սուրբ Աթոռի կողմից:

6. Դպրեվանքը մեր Աթոռի կեանքի ու առաքելութեան կիզակէտն է: Անհրաժեշտ է Դպրեվանքի կրթական ծրագիրը վերատեսուցեան ենթարկել եւ նոր ուսանողներ ունենալ նաեւ միջին-արեւելեան այլ երկիրներից եւ Հիւսիսային Ամերիկայից:

7. Վերջին հինգ տարիներին Դպրեվանքից անջատելով, Անթիլիասի Մայրավանքում էր հաստատուել քահանայից պատրաստութեան յատուկ դասընթացքը: Հետեւողական աշխատանք տանել թեմերից նոր թեկնածուներ ունենալու, որպէսզի կարելի լինի երիտասարդ քահանաների պատրաստութեամբ հայ եկեղեցու առաքելութեանը նոր թափ տալ:

8. Միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական յարաբերութիւնը մնում է մեր Սուրբ Աթոռի առաքելութեան կարեւոր տարածքներից մէկը: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մասնակցութիւնը միջազգային համագումարներին եւ միաժամանակ Անթիլիասի Մայրավանքում տեղի ունեցող շրջանային ու միջազգային միջ-կրօնական եւ միջ-եկեղեցական հանդիպումները կարող են մեծապէս նպաստել մեր եկեղեցու վարկին եւ մեր ազգային պահանջատիրութեանը:

9. Հայ Աւետարանական եւ Կաթողիկէ եկեղեցիների հետ մեր Սուրբ Աթոռի յարաբերութիւնը նկատում ենք կենսական: Յատկապէս համահայկական ծրագրերի եւ նպատակների շրջագծում հարկ է միասնական ոգով ամբողջական համագործակցութիւն հաստատել կաթողիկէ եւ աւետարանական եկեղեցիների հետ՝ նոյնը սպասելով նրանցից:

10. Ազգային պահանջատիրութիւնը մեր Սուրբ Աթոռի առաքելութեան կարեւոր բնագաւառներից մէկն է: Վերջերս տեղի ունեցած միջազգային համագումարը նկատում ենք կարեւոր իրագործում այս շրջագծում: Անհրաժեշտ է այդ համագումարի առաջադրութիւնների լոյսի տակ վերանորոգ թափով շարունակել մեր աշխատանքը:

11. Հայաստան-Սփիւռք գործակցութիւնը մի համահայկական առաջնահերթութիւն է: Չպէտք է բաւարարուել զգացական ու ժամանակաւոր բնոյթ ունեցող ծրագրերով: Անհրաժեշտ է հետապնդել խորք ու նպատակ ունեցող եւ նոր հունանորումներ ու հորիզոններ բացող ծրագրեր՝ յատկապէս շեշտելով համահայկական մտածողութեան մշակումը:

12. Հայ եկեղեցու երկու Կաթողիկոսական Աթոռների՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան ու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միջեւ համապարփակ ու սերտ գործակցութիւնը մեր Սուրբ Աթոռի համար միշտ մնում է առաջնահերթութիւն: Վերջին տարիներին այս ուղղութեամբ գործնական քայլեր առնեցին մանաւանդ հայ եկեղեցու բարեկարգութեան շրջագծում: Անհրաժեշտ է վերանորոգ աշխոժովութեամբ շարունակել այս գործընթացը: Մեր եկեղեցու բարեկարգութիւնը, նրա միասնականութեան ամրապնդումը եւ առաքելութեան վերակազմակերպումը անյետաձգելի հրամայականներ են:

13. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նախաձեռնութեամբ, Ղարաբաղում «Նոր Կիլիկիա» գիւղի շինութեան տասը տների կառուցման առաջին հանգրուանն իրագործել է: Պաշտօնական բացումը տեղի կունենայ յառաջիկայ մայիսին: Մեր Սուրբ Աթոռի թեմերը մասնակից են յիշեալ ծրագրի իրագործմանը: Որոշեց շարունակել այս ծրագիրը, որպէս գործնական արտայայտութիւն Ղարաբաղի անկախութեան ամրապնդման գծով մեր ունեցած յանձնառութեան:



14. Նահանջի մէջ գտնուող արեւմտահայերէնի պաշտպանութիւնը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համար դարձել է կարեւոր մտահոգութիւն: Անցեալ ամառ Անթիլիասում տեղի ունեցած կրթական համագումարն առաջարկեց Հայ Լեզուի Պաշտպանութեան Խորհրդի կազմութիւնը՝ Վեհափառ Հայրապետի գլխաւորութեամբ: Յիշեալ Խորհրդի կորիզն արդէն կազմել է եւ շուտով նրա աշխատանքային ծրագիրը կը յայտարարուի:

15. Սփիւռքի գաղութներում մեր ունեցած մարդուժի արձանագրութիւնը անյետաձգելի մի պահանջ է: Այս յոյժ կարեւոր գործին լծել է մեր

Սուրբ Աթոռը իր թեմերի մասնակցութեամբ: Այս ծրագրի իրագործումը արագացնելու համար ճշտեց յատուկ գործընթաց:

16. Նկատի ունենալով որ Լիբանանի միւս համայնքներն սկսել են արտերկրի լիբանանցիների արձանագրութեան, անհրաժեշտ նկատուեց, որ նոյն գործին լծեն նաեւ մեր թեմերը՝ գաղութներում գործող քոյր կազմակերպութիւնների գործակցութեամբ: յիշեալ ծրագիրը կարեւոր է Լիբանանի հայութեան համար՝ համայնքային ու քաղաքական իմաստով:

17. Թեմական մարմինների անունների շուրջ ներդաշնակութիւն ստեղծելու մտահոգութիւնից մղած, որոշուեց գործադիր մարմինները կոչել Ազգային Վարչութիւն, իսկ օրէնսդիր մարմինները՝ Ազգային Երեսփոխանական Ժողով: Իրանի երեք թեմերի պարագային յատուկ կարգադրութիւն եղաւ, նկատի ունենալով տեղական լեզւին առնչած որոշ մտահոգութիւններ: Նաեւ որոշեց հիմնական սկզբունքների գծով թեմերի կանոնագրութիւնների միջեւ ներդաշնակութիւն եւ միօրինակութիւն ստեղծել:

18. Յեղասպանութեան 100-ամեակի գծով որոշեց թէ՛ Կաթողիկոսութեան թէ՛ թեմական մակարդակի վրայ ամբողջական ու գործօն մասնակցութիւն բերել համահայկական բոլոր նախաձեռնութիւններին: Կաթողիկոսարանի նախաձեռնութեամբ տեղի կունենան հետեւեալ ձեռնարկները.- Հայրապետական Կոնդակ, Յեղասպանութեան ուսումնասիրութեան կենտրոն, Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ յուշամատենաների ամբողջական շարքի հրատարակութիւն, Պիքֆայայի յուշարձանի վերանորոգում եւ շրջապատի բարեկարգում, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան քաթալոկի հրատարակութիւն, Անթիլիասի Նահատակաց մատուան վերանորոգում, Յեղասպանութեան միջազգային համագումարի կազմակերպում, Կիլիկիոյ մէջ ազգապատկան եւ ապա անհատական կալաճների ցանկագրում, Ուխտագնացութիւն՝ կազմակերպած թեմերի կողմից դէպի Անթիլիաս, Դեր-Ձոր եւ Հայաստան, Միւսուսօրհնէք Դեր-Ձորի մէջ (2015), Պիքֆայայի յուշարձանի շուրջ համերգ, Յուշագիր՝ պետութիւններին, եկեղեցիներին, այլ կրօնների ղեկավարներին եւ միջազգային կազմակերպութիւններին:

19. Մեր բոլոր թեմերն ու կառույցները նւթարկութիւններ են դիմագրաւում: Կաթողիկոսարանի ընթացիկ բիւջէն շուրջ 1,700,000 դոլար է, որի 1/3-ը բաց է: Ամէն ճիգ հարկ է թափել թէ՛ բարերարների ճամբով եւ թէ՛ եկամտաբեր աղբիւրների որոնումով ինքնաբաւ դառնալու համար:

20. Ազգային Ընդհանուր Ժողովի թւական ճշտեց մայիս 2013:

21. Միաբանական հանդիպմանը կարեւորութեամբ շեշտեց միաբանական կեանքի հոգեւոր, մտաւոր եւ ծառայական երեսներին յատուկ կարեւորութիւն տալու հրամայականը: Վեհափառ Հայրապետի կողմից նշանակեցին հետեւեալ յանձնախմբերը.- Տնօրէն Ժողով՝ գերշ. Տ. Կորիւն արքեպս. Պապեան, գերշ. Տ. Նորայր եպս. Աշրգեան, հոգշ. Տ. Մասիս վրդ. Զօպուեան, հոգշ. Տ. Մեսրոպ վրդ. Սարգիսեան եւ հոգշ. Տ. Ղեւոնդ վրդ. Բենդէգեան: Միաբանական ու ծիսական կեանքում ներդաշնակութիւն ստեղծելու կոչած ուղեցոյցի պատրաստութեան համար՝ գերշ. Տ. Սուրէն արքեպս. Քաթարոյեան, գերշ. Տ. Կոմիտաս արքեպս. Օհանեան, գերշ. Տ. Օշական արքեպս. Չորոյեան, գերշ. Տ. Տիրայր արքեպս. Փանոսեան, գերշ. Տ. Սեպուհ արքեպս. Սարգիսեան եւ գերշ. Տ. Նարեկ արքեպս. Ալեքմէգեան: Միաբանական համագումարի եւ Քահանայից համագումարի (2014) պատրաստութեան համար՝ գերշ. Տ. Կոմիտաս արքեպս. Օհանեան, գերշ. Տ. Խաթակ արքեպս. Յակոբեան, գերշ. Տ. Նարեկ արքեպս. Ալեքմէգեան, գերշ. Տ. Շահան եպս. Սարգիսեան, գերպ. Տ. Գրիգոր Ծ. վրդ. Զիֆթճեան եւ հոգշ. Տ. Մասիս վրդ. Զօպուեան:

ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ 57-ՐԴ ՊԱՏՊԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՇՎԵՏՈՒՆԻՍՆԸ



Սպահանի Հայոց Թեմի 57-րդ Պատգամաւորական Ժողովի հաշւետու նիստը գումարեց թաւականիս 8 եւ 9 մարտին՝ նախագահութեամբ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի եւ ներկայութեամբ շրջանների պատգամաւորների, հոգեւոր դասի ներկայացուցիչների, Թեմական եւ Կրօնական խորհուրդների, Հաշիւքննիչ Մարմնի անդամների, ենթամարմինների ներկայացուցիչների եւ Ժողովի կողմից հրաւիրեալ ազգայինների:

Նիստի բացումը կատարեց Սրբազան Հօր աղօթքով եւ ողջոյնի խօսքով, որից յետոյ Սրբազան Հօր միջոցով ընթերցեց Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի Ժողովին ուղղած օրհնութեան գիրը: Այնուհետեւ նիստն անցնելով իր օրակարգին՝ փոխանցած տեղեկագրերի շուրջ ուղղեց իր հարցումները՝ Պատգամաւորական Ժողովի Դիւանին, Թեմական եւ Կրօնական խորհուրդներին եւ Հաշիւքննիչ Մարմնին՝ իրենց մէկամեայ գործունէութեան մասին եւ ապա բարձր գնահատեց գործադիր մարմինների անցնող տարեշրջանի ծրագրած եւ աշխոյժ գործունէութիւնը:

Օրակարգում նախատեսւած էր քննարկելու Թեմական եւ Կրօնական խորհուրդների ծրագրերը, սակայն Թեմական Խորհրդի ծրագրերի բազմաձաւլ լինելու պատճառով, դրանց քննարկումը, նաեւ մէկամեայ նախահաշիւի հաստատումը, յանձնեց յաջորդ՝ մայիսին կայանալիք նիստին, սակայն ժողովը հաստատեց Թեմական Խորհրդի կողմից ներկայացւած եւ պատկան յանձնաժողովի կողմից ուսումնասիրւած շինարարական երկու նախագծերը:



Ժողովն ի շարս ազգային-հասարակական եւ կրթա-մշակութային ոլորտներին առնչող այլ որոշումների՝ միաձայնութեամբ որոշում ընդունեց նաեւ ծանր հիւանդներին օգնելու նպատակով հիմնադրամ ստեղծելու կապակցութեամբ:

Պատգամաւորական Ժողովը քննարկեց դպրոցների հնարաւորութիւններն ընդարձակելու խնդիրը եւ որոշեց ստանալ մասնագէտների, դպրոցի պատասխանատուների եւ առնչակից այլ մարմինների տեսակէտները՝ վերոյիշեալ խնդրի կապակցութեամբ:

Երկօրեայ նիստերն ավարտեցին Թեմի առաջնորդ Սրբազան Հօր «Պահպանիչ» աղօթքով:

**ԴԻԻԱՆ ՊԱՏՊԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ
ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ**

ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ

Ապրիլի 20-ի երեկոյեան, Ն.Ձ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան սրահում, Սպահանի Հայոց Թեմի ազգային մարմինները հանդիպում էին նախաձեռնել Նոր Զուղայի հայ համայնքի հետ՝ իրենց գործունեության տարբեր բնագավառների ու ապագայ ծրագրերի մասին զեկոյց ներկայացնելու եւ ժողովրդի տեսակէտներն ու առաջարկներն ունկնդրելու նպատակով:



Թեմի ազգային մարմինների ու ենթամարմինների անդամներից բացի՝ հանդիպմանը ներկայ էին նաեւ՝ թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, քահանայից դասը, Իսլ. Խորհրդարանում հարաւային իրանահայության պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը եւ հոծ թույլ ժողովուրդ:

Կայացած հանդիպումը, որը վարում էր Ադրիեն Ղեւեանը, սկիզբ առաւ Թեմական Խորհրդի կողմից իրագործուած մի շարք աշխատանքներից պատրաստուած տեսանիւթի ցուցադրմամբ: Այնուհետեւ բեմ հրաւիրեցին Պատգամաւորական Ժողովի Դիւանի, Կրօնական եւ Թեմական խորհուրդների ատենապետեր Աշոտ Դաւթեանը, Արշալոյս Խուդավերդեանը եւ Նոէլ Մինասեանը՝ նշուած մարմինների զեկոյցը ներկայացնելու համար:



Նախ Աշոտ Դաւթեանը հակիրճ զեկոյց ներկայացրեց Պատգ. Ժողովի Դիւանի գործունեութիւնից, որում կարեւորութեամբ նշեց նաեւ կատարուած հան-

դիպումների եւ ապագայ ծրագրերի մասին՝ ակնարկ նետելով Պատգամաւորական Ժողովին ենթակայ յանձնաժողովների աշխատանքներին:

Հանդիպման շարունակութեան մէջ Կրօնական Խորհրդի մէկամեայ գործունեութեան շուրջ զեկոյց ներկայացրեց Արշալոյս Խուդավերդեանը, որը հիմնականում անդրադարձաւ Թեմի հոգեւոր եւ եկեղեցական կեանքին, Սրբազան Հօր գլխաւորութեամբ տեղի ունեցած հանդիպումներին ու աշխատանքներին եւ ընտանեկան անհամաձայնութիւնների լուծման ուղղութեամբ կեանքի կոչուած ատենանի, Կիրակօրեայ դպրոցների ու Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհրդի աշխատանքներին:



Հանդիպման վերջին զեկուցաբերը՝ Նոէլ Մինասեանը, մեծապէս գնահատելով համայնքի անդամների, ի մասնաւորի երիտասարդների ներկայութիւնը սոյն հանդիպմանը եւ առ հասարակ ազգային կեանքում, Թեմական Խորհրդի մէկամեայ գործունեութեանն առնչող զեկոյցն սկսեց՝ իրազեկելով Խորհրդի կողմից հիմք ընդունուած սկզբունքների մասին: Այնուհետեւ ներկաների ուշադրութեանը յանձնեց 11 գլուխներից եւ 66 ենթագլուխներից բաղկացած Խորհրդի ծրագիրը, որը միեւնոյն ժամանակ ցուցադրուում էր պաստառի վրայ: Սոյն ծրագրում ուշագրաւ էին շինարարական նախագծերը, երիտասարդների խնդիրներով զբաղող եւ ընտանիքների սոցիալական խնդիրների լուծման ուղղութեամբ աշխատող խորհուրդների նշանակման ու առաջնորդարանում իրաւական գրասենեակի հիմնադրման նախագծերը:

Հանդիպման երկրորդ բաժնում ներկաներից ոմանք գնահատելով ազգային մարմինների կողմից իրագործուած աշխատանքները, արծարծեցին իրենց տեսակէտներն ու առաջարկները եւ պատասխանատուներից ստացան իրենց յուզող հարցերի պատասխանները:

Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔԻ ԹԱՆԿԱՐԱՆԻ ՎԵՐԱՔԱՅՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ՝ ՆՈՐ ԶՈՒՂՅՈՒՄ

Մարտի 16-ի առաւօտեան, ներկայութեամբ հոգ. Տ. Անանիա վրդ. Գունանեանի, քահանայից եւ դըպրաց դասերի, Իսլ. Խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամատուր Ռոբերտ Բեգլարեանի, Թեմի ազգային մարմինների եւ Նոր Զուղայի ու Շահինշահրի հայ համայնքների անդամների, տեղի ունեցաւ Ս. Ամենափրկչեան Վանքի Թանգարանի վերաբացման հանդիսատու արարողութիւնը:



Յատկանշական է, որ շուրջ 8 ամիս առաջ Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհուրդը թանգարանի բարեգարդման ծրագրի շրջագծում որոշեց ստուգել եւ վերադասաւորել առկա իրերը, վերանորոգել թանգարանի շէնքը եւ արդիականացնել շէնքի անվտանգութեան համակարգը: Այնուհետեւ սոյն որոշումն իրագործելու նպատակով, դադարեցեց թանգարանի աշխատանքը եւ Առաջնորդարանի ու թանգարանի պաշտօնեաներից կեանքի կոչեց մի յանձնախումբ, որը ղեկավարութեամբ Թեմական Խորհրդի անդամ Մկրտիչ Աւետումեանի եւ մի շարք մասնագէտների խորհրդատուութեամբ, լծեց իրերի ստուգման աշխատանքին: Քիչ անց, սկսեցին նաեւ թանգարանի շէնքի վերանորոգման եւ ապահովութեան համակարգի արդիականացման աշխատանքները, որոնք աւարտուեցին օրեր առաջ:



Նոր Զուղայի թանգարանի վերաբացման հանդիսութիւնն սկսեց հոգեւորականաց դասի միջոցով Տէրունական եւ «Պահպանիչ» աղօթքների արտասանութեամբ, ապա թանգարանի մուտքի դռան ժապաւէնը միասնաբար կտրեցին հոգ. Տ. Անանիա վրդ. Գունանեանն ու Թեմական Խորհրդի ատենապետ Նոէլ Մինասեանը:

Այնուհետեւ ներկաները համախմբուեցին թանգարանում, որտեղ ելոյթ ունեցաւ Թեմական Խորհրդի ատենապետը: Նա այս բարեբաստիկ առիթով Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանի շնորհաւորանքի խօսքը փոխանցեց ներկաներին, որը Լիբանանում էր գտնուում թեմակալ առաջնորդների եւ ազգային իշխանութեանց ներկայացուցիչների ժողովին մասնակցելու համար, ապա անցնող 8-ամսեայ ժամանակահատուածը ազգային մարմինների եւ ժողովրդի համար դժարին ու պատասխանատու շրջան համարելով, հանդէս եկաւ իրագործած աշխատանքների շուրջ զեկուցով եւ հանգրւան առ հանգրւան ներկայացրեց կատարած գործողութիւնը:



Նոէլ Մինասեանն իր արտայայտութիւնների շարունակութեան մէջ դատապարտելով չարամիտ անձանց չարախօսութիւններն ու անհիմն զրպարտանքները՝ ազգային մարմինների հասցէին, որոնք ամիսներ առաջ տեղի էին ունեցել թանգարանի որոշ իրերի գողութեան բացայայտման ժամանակ, մեծ յաջողութիւն համարեց սոյն իրերի վերադարձը առաջնորդարան, որից յետոյ յատուկ շնորհակալական խօսքով գնահատեց յանձնախմբի անդամների եւ բոլոր դերակատար անհատների կատարած աշխատանքը՝ թանգարանի բարեգարդման ուղղութեամբ: Վերջում Թեմական Խորհրդի ատենապետը յայտարարեց, որ Թանգարանի բոլոր ձեռագիր մատեաններն էջ առ էջ լուսանկարել են եւ այսուհետեւ գիտաշխատողները կարող են իրենց ուսումնասիրութիւնների համար օգտուել սոյն լուսանկարներից:

Ծրագրի շարունակութեան մէջ պատատի վրայ ցուցադրեց անցնող ամիսների ընթացքում կատարած աշխատանքներին անդրադարձող տեսանիւթը, որից յետոյ ներկաներն առիթ ունեցան շրջելով թանգարանում, մօտկից ականատեսը լինել կատարած աշխատանքների:

Նշելի է, որ Թեմիս ազգային իշխանութեան հետեւողական ջանքերի եւ երկրի իրաւապահ մարմինների աշալուրջ հետապնդումների շնորհիւ, 2011 թականի դեկտեմբերին թանգարանից գողացած գրչագիր մատեանների հինգ պատատիկ էջերն ու երկու նկարչութեան շրջանակներն անվնաս վերադարձել էին Առաջնորդարան, որոնք յատուկ դասաւորութեամբ նոյնպէս ցուցադրել էին թանգարանում:

ԱՄԱԳ ԾԱՐԹԻԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Ծաղկազարդ եւ Դոնրացէք

Կիրակի՝ թականիս ապրիլի 1-ի առաւօտեան, Նոր Զուղայի Ս. Մինաս, Ս. Ստեփանոս, Ս. Աստուածածին եւ Ս. Յովհաննոս եկեղեցիներում եւ Ծախինշահի «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում մատուցեց սուրբ եւ անմահ Պատարագ ու տօնեց մեր Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի Երուսաղէմ յաղթական մուտքի յիշատակը:



Ս. Ստեփանոս եկեղեցում պատարագեց եւ յաւոր պատշաճի քարոզեց Թեմակալ առաջնորդ՝ գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանը:

Ս. Պատարագի աւարտին, եկեղեցու շրջափակում տեղի ունեցաւ մանուկների թափօրի արարողութիւն, որի ընթացքում Առաջնորդ Սրբազան Հայրն իր օրհնութիւնը տուց մանուկներին:

Երեկոյեան ժամը 5:30-ին, Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ գտնուեց Ս. Յովհաննոս եկեղեցում եւ նախագահեց Դոնրացէքի արարողութեանը եւ յաւոր պատշաճի քարոզեց: Մեծ Պահքի ամբողջ տեսողութեամբ փակած մնացած եկեղեցու վարագոյրը հանդիսաւոր արարողութեամբ բացուեց, որով սկսեց Աւագ Ծաբթուայ խորհրդաւոր ժամանակաշրջանը:

Տասր Կոյսերի Յիշատակի Օր



Երեքշաբթի՝ ապրիլի 3-ին, Նոր Զուղայի եւ Ծախինշահի եկեղեցիներում կատարուեց Տասր Կոյսերի յիշատակը: Ս. Աստուածածին

եկեղեցում արարողութեանը նախագահում էր գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանը:

Արարողութեան ընթացքում, Ս. Աւետարանի ընթերցման պահին, երբ Քրիստոսի պատմած Տասր Կոյսերի առակն էր կարդացուում, տասը աղջիկներ, ովքեր ներկայացնում էին առակի հինգ իմաստուն եւ հինգ յիմար կոյսերը, եկեղեցական շապիկ հագած, իրենց ձեռքերին մոմեր բռնած, ներկայացան եկեղեցու դաս: Վիճակահանութեամբ, խորհրդանշականօրէն յայտնուեցին իմաստուն եւ յիմար կոյսերը, ովքեր, ինչպէս Ս. Աւետարանն է պարզում, պատկերացում են Աստծու Արքայութեանը դիմաւորելու պատրաստ եւ անպատրաստ մարդկանց: Վերջում առաջնորդ Սրբազանն իր պատգամը տուց եւ բացատրեց օրայ խորհուրդը հաւատացեալներին եւ մանաւանդ հայոց դպրոցի ուղեցոյց օղակի աշակերտութիւններին, ովքեր եկել էին մասնակցելու եկեղեցական արարողութեանը եւ Տասր Կոյսերի թատերական պատկերը ներկայացնելու:

Վերջին Ընթրիքի Յիշատակի Օր

Աւագ Հինգշաբթի՝ ապրիլի 5-ին, եկեղեցիներում տեղի ունեցաւ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Վերջին Ընթրիքի, ընդ որում Ս. Հաղորդութեան հաստատման, Ունալայի եւ Խաւարման արարողութիւնները:

Առաւօտեան Ս. Պատարագի ժամանակ, առաջնորդ Սրբազան Հայրը յաջորդաբար ներկայ եղաւ Նոր Զուղայի Ս. Ստեփանոս եւ Ս. Մինաս եկեղեցիներում, նախագահեց արարողութեանը եւ օրայ պատշաճ իր քարոզը փոխանցեց ներկայ հաւատացեալներին: Եկեղեցիներում ներկայ էին հայոց դպրոցների աշակերտութիւնը՝ իրենց ուսուցիչների հետ, ովքեր ստացան Ս. Հաղորդութիւն, որը յիշեցնում էր Վերջին Ընթրիքի պահին մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի միջոցով օրհնած հացն եւ գինին՝ իբ-

րեւ Իր Մարինն ու Արիւնը եւ փրկութիւն՝ իրեն հաւատացողների համար:



Երեկոյեան առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ եղաւ Ս. Յովհաննու եկեղեցում, որտեղ հանդիսաւոր կերպով կատարեց Ոսնալայի արարողութիւնը: Առաջնորդ Սրբազան Հայրն արարողութեան պահին, օրինակ ստանալով Յիսուս Քրիստոսից, դենջակ կապեց եւ ծունկի գալով լաց 12 պատանհների ոտքերը, ովքեր ներկայացնում էին Յիսուսի 12 առաքեալներին: Արարողութեան պահին երգող եւ ընթերցող շարականները, աղօթքներն ու գրքերը բոլորը փոխանցում էին մեր Տիրոջ սովորեցրած սիրոյ եւ խոնարհութեան դասերը, որոնք անհրաժեշտ են մարդուն՝ աստուածահաճոյ կեանք ունենալու համար:

Երեկոյեան ժամը 7:30-ին, Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայացաւ Ս. Ստեփանոս եկեղեցում՝ նախագահելու Խաւարման արարողութեանը: Աւետարանական ընթերցումներով եւ խորհմաստ շարականների եւ մեղեդիների երգեցողութեամբ աւլեցուն այս արարողութիւնը խորհրդանշում է մեր Տիրոջ ձերբակալութիւնն ու շարչարանքը, որը յանձն առաւ մարդկութեան փրկութեան համար:



Երկարատեւ արարողութեան ընթացքում մարեցին եկեղեցու բոլոր լոյսերը՝ ի նշան Յիսուս Քրիստոսի խաչի վրայ Իր հոգու աւանդումին: Խորհրդաւոր այդ պահին առաջնորդ Սրբազան Հայրն իր յուզիչ խօսքն արտասանեց՝ ներկայ հաւատացեալներին յիշեցնելով, որ Քրիստոս խաչուեց մեր մեղքերի թողութեան համար, որի պատճառով

ոով պարտինք առաքինի եւ մեղքերից հեռու կեանք որդեգրել՝ Քրիստոսի սիրոյ մէջ մնալու համար:

**Մեր Տիրոջ՝
Յիսուս Քրիստոսի
Չարչարանքի եւ
Խաչելութեան Յիշատակի Օր**

Աւագ Ուրբաթ՝ ապրիլի 6-ի երեկոյեան ժամը 6:30-ին, Սպահանի Հայոց Թեմի բոլոր հոգեւորականաց դասը մեկտեղել էր Նոր Զուղայի Ս. Մինաս եկեղեցում, ուր տեղի ունեցաւ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի շարչարանքի եւ խաչելութեան յիշատակի արարողութիւնը: Արարողութեանը նախագահում էր թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը:

Տեղի ունեցաւ Թաղման խորհրդանշական կարգը եւ եկեղեցու դասի կենտրոնում տեղադրուած Քրիստոսի գերեզմանը խորհրդանշող ծաղկազարդեալ դագաղի առջեւ ծունկի եկած հոգեւորականաց դասը յուզիչ կերպով երգեց «Սուրբ Աստուած»-ը: Թաղման կարգի աւարտին առաջնորդ Սրբազանն իր պատգամը տւեց հաւատացեալներին, յիշեցնելով որ «**Անմահութիւն պարգեւող Քրիստոսը այսօր մահաւան հողի մէջ խոնարհուեց: Անմատոյց յոյսի մէջ բնակւողը այսօր երկրի սրտում թաղուեց**»: Իր խօսքի աւարտին շեշտեց, որ այսօրուայ ծաղկազարդեալ գերեզմանը մեզ համար խորհրդանշիչ է անմահութեան: Այս հոգեւորականաց դասը ծունկի եկած երգեց «Խաչի Քո Քրիստոս» շարականը:

Ճրագալոյց Ս. Զատիկի

Մեծ Պահոց ժամանակաշրջանն իր աւարտին հասաւ շաբաթ՝ ապրիլի 7-ի երեկոյեան, հայոց եկեղեցիներում մատուցուած Ճրագալոյցի սուրբ եւ անմահ Պատարագով: Նոր Զուղայի եւ Ծախինշահրի եկեղեցիներում հանդիսաւոր Ս. Պատարագ տեղի ունեցաւ, որին մասնակցեցին հաւատացեալներ, իրենց խուռներամ շարքե-

րով՝ Ողջունի պահին լսելու «Քրիստոս յարեալ ի մեռելոց» յաղթանակի անտիսը:



Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ էր եւ Ս. Պատարագին նախագահում էր Նոր Զուղայի Ա. Ստեփանոս եկեղեցում: Ս. Պատարագի ընթացքում կատարւեց Զղջման արարողութիւնը, որից յետոյ ներկայ հաւատացեալներն ստացան Ս. Հաղորդութիւն:



Տեղին է անդրադառնալ, որ նոյն օրը նաեւ Ս. Աստուածածնի Աւետման Տօնն էր, ինչպէս նաեւ՝ Մայրերի Տօնը: Առաջնորդ Սրբազանն իր խօսքի մէջ յիշեց մեր բոլոր մայրերին եւ շնորհաւորեց մաղթելով նրանց երկար կեանք եւ քաջառողջ օրեր:

Պատարագի աւարտին Եկեղեցեաց Վարչութեան կողմից տիկնանց յանձնախմբերը մէկական ծաղիկ նւիրեցին բոլոր մայրերին:

Ս. Զատիկ



Կիրակի՝ ապրիլի 8-ի առաւօտեան, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի

յաղթական Յարութեան Տօնի առթիւ, Ս. Պատարագ մատուցեց Նոր Զուղայի եւ Ծափինշահրի հայոց եկեղեցիներում:

Թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանը, «Նարեկ» երգչախմբի ընկերակցութեամբ, հանդիսաւոր թափօրով մուտք գործեց սրահ եւ պատարագեց Ծափինշահրի «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում եւ զատկական իր ոգեշունչ պատգամը փոխանցեց ներկայ հաւատացեալներին: Պատարագից Սըրբազան Հօրը սպասարկում էին Ծափինշահրի հոգեւոր հովիւ՝ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը եւ նորած արժն. Տ. Վարդան քինյ. Աղաբաբայեանը: Առաջնորդ Սրբազան Հայրն իր քարոզի ընթացքում, Քրիստոսի Ա. Յարութեան խորհուրդը ներկայացնելուց բացի, յայտարարեց, որ արժն. Տ. Վարդան քինյ. Աղաբաբայեանը, Կրօնական Խորհրդի եւ Ծափինշահրի Համայնքային Վարչութեան համախորհուրդ որոշմամբ, նշանակւել է որպէս հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանի օգնական եւ Ծափինշահրի հոգեւոր հովիւ, որի կապակցութեամբ իր շնորհաւորանքները փոխանցեց Ծափինշահրի հայ համայնքին:

Ս. Պատարագի աւարտին, դարձեալ հանդիսաւոր թափօրով, պատարագից Սրբազան Հայրը դուրս եկաւ հայոց դպրոցի բակ՝ օրհնելով ներկայ հարիւրաւոր հաւատացեալներին եւ շարականի երգեցողութեամբ բարձրաձայն «Քրիստոս յարեալ ի մեռելոց» անտիսով խաղաղութեամբ արձակեց ժողովրդին:

Ս. Պատարագից յետոյ, Առաջնորդ Սրբազան Հայրն իր կողքին ունենալով հոգշ. Հայր Սուրբին, արժն. Տէր Հօրը եւ Ծափինշահրի Համայնքային Վարչութեան անդամներին, ընդունեց ժողովրդի շնորհաւորանքները:



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԵՐԺԵՅ ՏԱՐՅԱԶՐՈՅՅ ՈՒՆԵՆԱԼ ԹՐՔԱԿԱՆ ՏԵՌԱՏԵՍԻԼԻ ՎՐԱՅ

Պատասխանելով թրքական արքանեակային հեռատեսիլի վրայ Վեհափառ Հայրապետի հետ հարցազրույց ունենալու հրավերին, Կաթողիկոսարանի Տեղեկատուական Բաժանմունքը մերժեց ընդառաջել նման հրավերին:

Իր պատասխանի մեջ, Տեղեկատուական Բաժանմունքը ասում էր. «Հայկական խնդիր գոյութիւն չունի հայ ժողովրդի համար, ինչպէս որ բնորոշում էք: Հայկական Յեղասպանութիւնը պատմական իրողութիւն է եւ իբր այդպիսին, այն քննարկումի, երկխօսութեան կամ բանակցութեան նիւթ չի կարող դառնայ»:

Յեշտելով, որ Թուրքիան պէտք է ճանաչի Յեղասպանութիւնը եւ հատուցում վճարի, նամակում ասում է. «Ինչպէս Թուրքիան ինքն իրեն ներկայացնում է պաշտպան մարդկային իրաւունքների եւ շարունակում է անտեսել հայ ժողովրդի իրաւունքները» եւ ապա ավելցնում է թէ՛ «Հայ ժողովրդի իրաւունքներն անտեսելով, արդարութիւնն ու մարդկային իրաւունքները պաշտպանող նախաձեռնութիւններին կոշտ կերպով հակազդելով, Թուրքիան չի կարող ազգերի միջեւ փոխադարձ հասկացողութիւն յառաջացնել»:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 97-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ ՏՈՒՆՏԱՆԳՍԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ, ՄՈՄԵՐՈՎ ԵՐԹ ԵՒ ԲՈՂՈՒԲԻ ՏԱՄԱՏԱՒԱԲ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ

Երկուշաբթի, ապրիլի 23-ի երեկոյեան

Հայոց Ցեղասպանութեան 97-րդ տարելիցի ոգեկոչման Նոր Զուղայի յանձնախմբի կողմից նախաձեռնած ծրագրերի շարանում, ապրիլի 23-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Նոր Զուղայի պահանջատէր հայորդիների խումներամ մասնակցութեամբ, Ս. Ստեփանոս եկեղեցում, նախագահութեամբ թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի տեղի ունեցաւ Հսկման արարողութիւն:



Այնուհետեւ խորհրդաւոր լուծեան եւ լույսերի ներքոյ՝ ներկաներն սկսեցին իրենց աւանդական ցուցը՝ մոմերով երթը դէպի Ս. Ամենափրկչեան Վանք, առաջնորդութեամբ Սրբազան Հօր, քահանայից դասի, Հայ Դատի Յանձնախմբի անդամների, Իսլ. Խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանի, ազգային մարմինների ներկայացուցիչների, Սիրիայից ժամանած ազգային-հասարակական գործիչ Գրիգոր Տունկեանի եւ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Սկստուական Միաւորի ջահակիր խմբի:

Քալերթն ընթացաւ Սպահանի գլխաւոր պողոտաներից՝ Արեւելեան եւ Արեւմտեան Նազարներով եւ Ս. Ամենափրկչեան Վանքի պողոտայով: Երթն աւարտելուն պէս՝ մոմերը տեղադրեցին Ս. Ամենափրկչեան Վանքում վեր խոյացած Ապրիլեան Եղեռնի նահատակների յուշարձանի մօտ, ինչպէս նաեւ պատանդանին տեղադրած Դեր-Զորի մասունքների շուրջ:



Այնուհետեւ Ս. Ամենափրկչեան Վանքում սկսեց բողոքի համահաւաք, որը վարեց Լեռնիկ Ծատուրեանը: Նա Հայոց Ցեղասպանութեան 97-րդ տարելիցի ոգեկոչման Նոր Զուղայի յանձնախմբի անունից ողջունելով ժողովրդի ներկայութիւնը՝ այսպէս արտայայտուեց. «Տարիներ անց, երբ դեռ շարունակուում է կոտորածը հայերի դէմ եւ թուրքը դեռ առիթ է փնտրում ոչնչացնել հայից մնացած եւ նրա գոյութեան ու առաւել եւս նրա մշակոյթի եւ արեւստի մասին վկայող կոթողները, ահա այսպիսի բռնուն ներկայութեամբ հայը դառնում է պատմութեան մի հատոր՝ աշխարհին ճանաչեցնելու 1915 թլականը, որը հանւած է թրքական գրադարանից»:

Հաղորդավարի արտայայտութիւններին յաջորդեց Հայոց Ցեղասպանութեան 97-րդ տարելիցի ոգեկոչման Նոր Զուղայի յանձնախմբի խօսքը, որն ըն-

թերցւեց յանձնախմբի անդամ Հերմինէ Բաբայեանի



միջոցով: Խօսքում կարեւորութեամբ ասւած էր. «Այսօր միջազգային հարթակներում խաղաղասէրի ու բարեբարի դեր ստանձնած թուրք կառավարութիւնը փորձում է համոզել ամբողջ աշխարհին, որ գտնւում է այլ հարթութեան վրայ: Դժւար չէ կռահել, թէ թուրք կառավարութեան եւ նրա ծրագրերի յետեւում թաքնւած են նոյն էներգիան, Ձեմայլը եւ Թալիստանը ու նրանց փանթուրքիստական գաղափարները: Ինչո՞ւ թուրքիան, որը դատապարտում է Սիրիայում կատարւած վերջին իրադարձութիւնները, իր երկրում հանդուրժում եւ արդարացնում է անմեղ մարդկանց սպանութիւնը: Նա իբր դատապարտում է ցեղասպանութիւնները՝ միեւնոյն ժամանակ ժխտելով Հայոց ցեղասպանութեան փաստը»:



Ելոյթների շարանում, յանուն Սպահանի Հայոց Թեմի եւ ազգային մարմինների, արտայայտւեց Թեմական Խորհրդի ատենապետ Նոէլ Մինասեանը: Ահա մէջբերումներ այդ ելոյթից. «Թուրքիայի իշխանութիւնների եւ նրա հաւատաւոր եղբայր Ադրբեջանի կողմից Հայոց ցեղասպանութեան եւ Արցախի հիմնահարցի նկատմամբ կիրառւող ժխտման քաղաքականութիւնը, ամենուրեք տարւող հակահայկական քարոզարշաւը, պատմութեան խեղաթիւրումները, եւրոպական եւ միջազգային կառույցների դռները բախելը եւ հնչեցւող սպառնալիքները, վկայում են, որ ցեղասպանութեան իրողութիւնը հա-

մայն աշխարհին ճանաչեցնելու ուղղութեամբ մեր ժողովրդի կողմից տարւած երկարատեւ եւ պահանջատիրական պայքարը լաւապէս արդիւնաւորւում է, որի հետեւանքով օրըստօրէ ընդարձակւում են այն պետութիւնների թիւը, որոնք պաշտօնապէս ճանաչում եւ դատապարտում են Հայոց ցեղասպանութիւնը», իսկ մի այլ տեղ՝ «Ահաւասիկ մեզ մնում է վերակազմակերպւենք որպէս մէկ ամբողջական ժողովուրդ եւ համախմբւենք համահայկական ու համագային բնոյթ կրող ծրագրերի շուրջ: Նոր թափ տանք Հայոց ցեղասպանութեան միջազգայնօրէն ճանաչման աշխատանքներին՝ յոյս ունենալով, որ մինչեւ Մեծ Եղեռնի 100-ամեակը թուրքիային պարտադրելու ենք ընդունելու այն»:



Համահաւաստի շարունակութեան մէջ ասմունքով հանդէս եկան Փերիոյ Կրթասիրաց Միութեան ասմունքի խմբի անդամ Մարտունի Խաչիկեանը՝ ղեկավարութեամբ Անահիտ Կիրակոսեանի ու Ն.Ջ. Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան «Փարոս» ասմունքի խմբի անդամներ՝ Վեհանուշ Խուդաբախշեանն ու Արեգա Ծատուրեանը՝ ղեկավարութեամբ դուկտ. Սիլւա Ալլահվերդեանի, իսկ ազգային-յեղափոխական երգերով պահանջատէր ժողովրդին ոգեշնչեցին Ծահինշահի երգիչներ՝ Լիդուշ Քամարգարեանը, Նորվան Աղախանեանը եւ Էմմանուէլ Քամարգարեանը՝ ղակավարութեամբ հոգձ. Տ. Անանիա վրդ. Գունանեանի:

Համահաւաստի եզրափակիչ ելոյթը հանդիսացաւ թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանի հայրական օրհնանքը: Սրբազան Հայրը ժողովրդի խոնարհումը Դեր-Չորից բերած նահատակների առջեւ յուզիչ պահ համարելով՝ ասաց. «Այսօր մենք Դեր-Չորի մէջ չենք, սակայն Դեր-Չորը մեզ մէջ է, քանի որ Դեր-Չորից բերւած մեր նահատակների աճիւնները մեզ հետ են»: Այնուհետեւ մէջբերում կատարելով 4-րդ դարի մատենագիր Ագաթանգեղոսի այն խօսքը, որով նահատակների մարմիններն ու ոսկորները Աստուծու տաճար է անցանել, ասելացրեց. «1915-ի Ապրիլ 24-ը՝ խաչի Մկրտութեան թւականը, չմոռանալու օր է, քանի որ ամբողջ

Արեւմտահայաստանը կորցրեց իր հարստութիւնը, իր հրաշակերտ կոթողներն ու սուրբ եկեղեցիները եւ ամբողջ Արեւմտահայութիւնն իր ողջ դասակարգերով առարկայ դարձաւ թուրք պետութեան կողմից սառնասրտօրէն ծրագրուած ցեղասպանութեան: Չմոռանալու օր է, քանի որ կորցրինք մեր հողը եւ մեր հոգեւորականներին ու մտաւորականներին՝ մտքի, հոգու եւ սրտի սերմնացաններին: Ապրիլ 24-ը աշխարհին եւ թուրքին յիշեցնելու օր է նաեւ, որ ճշմարտութիւնը չի կարելի խեղաթիւրել ու գերեզմանել եւ արդարութիւնն է յաղթելու»:



Սրբազան Հայրն իր խօսքի աւարտին այս օրը ուխտի վերանորոգման օր անուանելով՝ կոչ ուղղեց. «Միակամ կեցեաձքով վերանորոգել մեր ուխտը, հաւատարիմ մնալ մեր նահատակների կտակին, Վարդանի սրին, մեր լեզւին ու ինքնութեանը եւ բռնցքացած հաւաքականութեամբ շարունակել պայքարը»:



Սրբազան Հօր ելոյթից յետոյ, բոլոր ներկաների կողմից վառուած մոմերով ու Եղեռնի Յուշարձանին

մատուցուած ծաղիկներով մէկ անգամ եւս անմահացաւ Հայոց Մեծ Եղեռնի Բիւրուր Նահատակների յիշատակը:



Բողոքի համահաւաքին յաջորդեց Հ.Յ.Դ. «Ռուբէն» Երիտասարդական Միութեան կազմակերպած բաց զրուցարանը (Talk show), որին մասնակցել էին տասնեակ երիտասարդներ: Սկզբում ցուցադրուեց Ցեղասպանութեանն առնչուող մի տեսահոլովակ, որից յետոյ զրուցավարութեամբ հանդէս եկան Մանիա Ղուկասեանն ու Մհեր Խուդաբախշեանը: Նրանք ընթացքում խօսեցին Մ.Ա.Կ.-ի կողմից հաստատուած Ցեղասպանութիւնը դատապարտող բանաձեւի գլուխներից, բացատրեցին «Հայ Դատ»-ի եւ «Հայկական հարց»-ի հոլովոյթները եւ հայոց պահանջատիրութեան առնչութեամբ երիտասարդներին յուզող մի շարք հարցեր, լսելով նաեւ ներկաների տեսակէտներն այդ ուղղութեամբ:



Յատկանշական է, որ այդ օրը կ.լ. ժամը 5-ից Վանքի շրջափակում 24-ժամեայ նստացոյցի էին դիմել Հ.Յ.Դ. «Թաղէոս Թաղէոսեան» Պատանեկան Միութեան անդամները, որոնք համահաւաքի ամբողջ ընթացքում իրենց վանկարկումներով ու լեղափախական երգերով ոգեւորում էին ներկաներին: Իսկ անմար ջահերը ձեռքերին բռնած Եղեռնի զոհերի յիշատակը յաւերժացնող յուշարձանի շուրջ, Հսկման արարողութիւն տեղի ունեցաւ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Սկսուտական Միաւորի անդամներին:

րի միջոցով: Ինչպես նախորդ տարիները, տեղի ունեցաւ նաեւ արեան տուչութիւն:



Ուշագրաւ էր նաեւ ոգեկոչման յանձնախմբի նախաձեռնութեամբ յուշարձանի շրջափակում տեղադրուած Հայոց Ցեղասպանութեան լուսանկերների ցուցահանդէսը, որով Ս. Ամենափրկչեան Վանք այցելող զբօսաշրջիկներին առիթ է ընձեռուում դիտելու Ցեղասպանութեան իրողութիւնը փաստող լուսանկարները եւ անմեղ զոհերի յիշատակին մէկակական մոմ վառել:

Երեքշաբթի, ապրիլի 24-ի առաւօտեան



Ապրիլի 24-ի առաւօտեան, Ս. Ամենափրկչեան Վանքի շրջափակում թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանի նախագահութեամբ եւ քահանայից ու դպրաց դասերի մասնակցութեամբ տեղի ունեցաւ Հոգեհանգստեան արարողութիւն: Արարողութեանը երգեցողութեամբ մասնակցել էին նաեւ Ս.Ա. Վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Արմէն Ամիրխանեանի:

Հոգեհանգստեան արարողութեանը յաջորդեց ազգային մարմինների, միութիւնների եւ դպրոցների պատասխանատուների ծաղիկների մատուցումը:

Այնուհետեւ սկիզբ առաւ քաղաքական բողոքի համահաւաքը եւ հաղորդավար Լեոնիկ Ծատուրեանը հրաւիրեց Ծաբէ Մովսիսեանին՝ նստացոյցի դիմած «Թաղէս Թաղէտեսան» Պատանեկան Միութեան խօսքն ընթերցելու:

Սոյն խօսքում այս հաւաքը նոր ուխտի եւ յանձնա-

րութեան վերահաստատման առիթ համարելով՝ ասուած էր. «Ցեղասպան թուրքիան ձախողել է իր հայկործան ծրագիրն աւարտին հասցնել, քանի որ



մենք ու մեր հասակակիցները Հայաստանում, Արցախում, Զաւախքում եւ Սփիւռքի տարբեր համայնքներում գոյութիւն ունենք ոչ միայն ֆիզիքապէս, այլ մեր անրեկանելի կամքով, մեր հաստատ ու նպատակաուղղուած պայքարով, մեր անքակտելի կապուածութեամբ հայ մշակոյթին, լեզւին ու փառապանծ պատմութեանը, մեր անվիճարկելի հաւատարմութեամբ անկախացած մեր հայրենիքին՝ Հայաստանին եւ ազատագրուած սուրբ Հոյին՝ Արցախին եւ որ ամենից կարեւորն է՝ ապագայի նկատմամբ անսպառ յոյսով, որ՝ այժմ մենք ի վիճակի ենք հաստատել արդարութիւնը»:



Համահաւաքի մի այլ հանգրաւանում ելոյթ ունեցաւ Իրանի Իսլ. Խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամատուր Ռոբերտ Բեգլարեանը: Ահա մէջբերումներ այդ ելոյթից. «Հայերը Ցեղասպանութեան հետեւանքով առաջացած ցնցումի պատճառով, այդ ոճրին յաջորդող հանգրաւաններն անց են կացել պոռթկումներով, ինքնաուրացումներով, վերագտնումներով եւ վերյիշումներով, իսկ հետա-

գային՝ վրէժխնդրութեամբ լցած զգացմունքներով



ու գաղափարներով, մինչեւ անցել ենք պահանջատիրութեան հանգրւանին եւ այսօր ներկայացնում ենք հատուցման պահանջը: Դա ինքնին վկայում է, թէ ազգն էլ ինչպէս անձը կարող է իրեն վերագրտնել, վերակազմակերպել եւ նպատակասլաց հետեւել իր առաքելութեանը: Բայց ոճրագործ թուրքը ի՞նչ է ստացել այս 97 տարիների ընթացքում: Կարելի է տարբեր մեկնաբանութիւններով յայտնել, թէ նրանք ունեցել են հողային ամբողջականութիւն, կերտել են պետականութիւն, շփումների մէջ են միջազգային կառույցների եւ այլ երկրների հետ, սակայն Թուրքիան այսօր տառապում է ինքնութեան եւ ինքնագիտակցութեան նկատմամբ ունեցած թերահաւատութեամբ»:



Պատգամաւորի ելոյթից յետոյ, ներկաները վեր բարձրացրած բռունցքներով վանկարկեցին դատապարտող ու հատուցում պահանջող կարգախօսներ եւ նրանց պահանջատիրական ցոյցը շարունակեց նաեւ Վանքի փողոցում:

Բողոքի համահաւաքը աւարտուեց վերածնունդ ներշնչող «Սարդարապատ» երգով:



Ն.Ջ. ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ԾԱՂԿԵՄԱՏՈՅՅԸ՝ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ

Իւրաքանչիւր տարի, ապրիլ 24-ի նախօրէին, Նոր Զուղայի հայոց ազգային դպրոցների աշակերտները, ուղեկցութեամբ դպրոցի պատասխանատուների, համապատասխան պատաստներով, իրենց դպրոցներից քայլերթ են կազմակերպում դէպի Ս.Ա. Վանք, որտեղ ներկայութեամբ՝ թեմակալ առաջնորդի, ազգային մարմինների ներկայացուցիչների եւ ոգեկոչման յանձնախմբի անդամների, իրենց յարգանքի տուրքն են մատուցում Եղեռնի Բիւրաւոր Նահատակներին: Նրանք փողոցում հատուցում պահանջող կարգախօսների վանկարկումներով եւ վեր բարձրացրած բռունցքներով՝ գրաւում են երթուկների ուշադրութիւնը եւ իրենց պահանջատիրական ձայնն են լսելի դարձնում նաեւ պարսիկ հայրենակիցներին: Իսկ Վանքի շրջափակում աշակերտական այս գեղեցիկ ցոյցերը նույնպէս աննկատ չեն մնում Վանքի այցելող զբօսաշրջիկների աչքերից: Այս տարի Նոր Զուղայի հայոց դպրոցների աշակերտների ծաղիկների մատուցման արարողութիւնները կատարուեցին հետեւեալ կարգով.

Ապրիլի 21

Շաբաթ, առաւօտեան ժամը 11:30-ին, Ս. Ամենափրկչեան Վանքի շրջափակում գտնուող Եղեռնի Զոհերի Յուշարձանի մօտ տեղի ունեցաւ ծաղիկների մատուցման արարողութիւն, մասնակցութեամբ՝ «Քանաճեան» աղջ. եւ «Կատարիճեան» տղայոց ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցների պատասխանատուների եւ աշակերտների:



Սկզբում Հերմինէ Բաբայեանն արտայայտեց Հայոց Յեղասպանութեան 97-ամեակի ոգեկոչման Նոր Զուղայի յանձնախմբի անունից: Ծրագրի շարունակութեան մէջ, աշակերտական ելոյթների շարանում, բարձրաձայն վանկարկումներից բացի, օրան պատշաճ խօսքն ընթերցեց Վահագն Խուրաբախչեանը, որից յետոյ ասմունքներով հանդէս եկան Թանհա Մինասեանը, Լաւրա Խուրաբախչեանն ու Միւր Ղազարեանը: Ուշագրաւ էին նաեւ «Կատարիճեան» դպրոցի տղաների միջոցով վեր բարձրացւած երկու մեծ պատաստները, որոնց վրայ անգլերէն եւ պարս-

կերէն լեզուներով գրած էին Հայոց Յեղասպանութիւնը դատապարտող լուզուճներ:



Այնուհետեւ թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանն իր պատգամը փոխանցեց աշակերտներին: Սրբազան Հօր խօսքում կարեւորութեամբ ասած էր. *«Սիրելի աշակերտներ, դուք լաւապէս գիտէք, թէ 1915 թվականին ինչ է կատարել Արեւմտահայաստանում: Մեր ժողովուրդը դարձաւ տարագիր՝ հասնելով մինչեւ Դեր-Ջորի անապատը: Թուրքը փորձեց հային բնաջնջել, բայց ճախողեց նրա ծրագիրը: Այսօր թուրքն ակնատեսն է կազմակերպւած Սփիւռքի եւ Հայաստանի պետականութեան, բարգաւաճման ու հզօրացման: Դուք, որպէս նոր սերնդի ներկայացուցիչներ, չմոռանալով մեր պատմութիւնն ու անցեալը՝ պէտք է յիշեցնէք աշխարհին մեր նահատակների կտակը եւ պահանջատէրը լինեք մեր արդար իրաւունքների»: Վերջում ծաղիկներ դրւեցին Եղեռնի յուշարձանի մօտ:*

Ապրիլի 22

Այդ օրը, առաւօտեան ժամը 11:30-ին Նոր Զուղայի հայոց ազգային «Արմէն» տարրական համալիրի աշակերտ-ուհիները ներկայ գտնւեցին Ս. Ամենափրկչեան Վանք՝ իրենց յարգանքի տուրքը մատուցելու Մեծ Եղեռնի Բիւրատր Նահատակների յիշատակին: Նրանք հատուցման պահանջը յայտնում էին իրենց ցասումով միապատած մանկական բուռնցքներով:



«Արմէն» համալիրն այս տարի ծաղիկների մատուցման արարողութեանը ներկայացել էր գեղեցիկ մտայղացմամբ՝ իրենց հետ բերելով հայ ժողովրդի գոյատեւումը խորհրդանշող նուրը եւ յանձնարարութեան

ծառը: Դպրոցի աշակերտները մօտենալով յանձնարարութեան ծառին, վանկարկում էին ժապաւէնների վրայ գրած կարգախօսները, այնուհետեւ ուխտելով, որ լինելու են Հայ Դատի անխոնջ պաշտպանները, ժապաւէնները կապում էին ծառի ճիւղերին:

Օրւայ ելոյթների սկիզբը հանդիսացաւ «Արմէն» համալիրի տեսուչ Վրէժ Շիրանեանի խօսքը, որից յետոյ ամուսնացեց աշակերտուհի Լիլիթ Գեորգեանը: Ծրագրի երկրորդ բաժնում աշակերտների միջոցով ընթերցւեցին Յեղասպանութեան իրողութեանն աղընչւող եւ հատուցում պահանջող խօսքեր՝ հայերէն եւ անգլերէն լեզուներով:



Հայերէն խօսքն ընթերցեց Լուսիա Մատթեոսեանը, իսկ անգլերէնը՝ Նելիանա Գրիգորեանն ու Լուսին Մինասեանը: Այնուհետեւ Միքիա Դալթեանն ընթերցեց դպրոցի բանաձեւը՝ պարսկերէն լեզուով, որի իւրաքանչիւր կէտը հաստատուեց միւս աշակերտների վանկարկումներով: Աշակերտական ելոյթն ասարուեց ազգային-յեղափոխական խմբերգով, որին յաջորդեց ոգեկոչման յանձնախմբի խօսքը՝ Հերմինէ Բաբայեանի արտայայտմամբ:



Արարողութեան ասարտին իր հայրական խօսքը փոխանցեց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը: Սրբազան Հայրն իր ուրախութիւնը յայտնելով նոր սերնդի զգաստ ու խորիստ ներկայութեան համար, անւազրեց. *«Այսօր դուք եկել էք փաստելու թուրքին, որ հայը ողջ է եւ պահանջատէր: Եկել էք*

ձեր ուխտը նորոգելու: Այսօր հայ պահանջատէր սերունդը ողորմութիւն չի ուզում աշխարհից, այլ արդարութիւն: Արդարութիւնը յաղթելու է նաեւ գիտութեամբ, եւ դուք ձեր գիտութեամբ եւ խելքով պէտք է պայքարէք հայ ժողովրդի արդար իրաւունքների պաշտպանութեան համար»:

Ծրագիրն աւարտեց ծաղիկների մատուցմամբ:

Ապրիլի 23

Երկուշաբթի, առաւօտեան ժամը 10:30-ին տեղի ունեցաւ Նոր Զուղայի հայոց ազգային Մանկապարտէզ-Նախակրթարանի ծաղիկների մատուցումը:



Նախ՝ ներկաներն ունկնդրեցին Նոր Զուղայի ոգեկոչման յանձնախմբի անդամ ՀերմիՆԷ Բաբայեանի ոգետրիչ խօսքը, այնուհետեւ վանկարկումներով, հայրենասիրական արտասանութիւններով ու խմբերգերով, թոթովախօս մանուկները բացականչեցին իրենց արդար պահանջը՝ խոստանալով, որ պաշտպանելու են հայոց արդար Դատը: Ծրագրի մի այլ բաժնում արժն. Տ. Մեսրոպ քինյ. Գալստանեանը հակիրճ բացատրեց Մեծ Եղեռնը, կարեւորութեամբ նշելով՝ «Այսօր մենք պարում ենք շնորհիւ ձեր նման քաջարի գաւակներին: Պէտք է պայքարենք մինչեւ վերջնական յաղթանակ, մինչեւ այն ժամանակ, որ թուրքը ծնկի գայ»: Քահանայ հօր յաւուր պատշաճի խօսքերին յաջորդեց Տէրունական աղօթքը, որից յետոյ ծաղիկներ մատուցեցին Եղեռնի Յուշարձանին:



Աշակերտութեան հետքերով քայլեց նաեւ Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Ուսանողական Միաւորը: Նոյն օրը, Մանկապարտէզ-Նախակրթարանի ծաղիկների մատուցման արարողութիւնից յետոյ, համայնքիս հայ ուսանողները ներկայ գտնուելով Ս.Ա.

Վանք, իրենց յարգանքի տուրքը մատուցեցին Եղեռնի Բիրաւոր Նահատակների անմոռաց յիշատակին:

Ծրագրում նախ Ալեկուշ Ամիրխանեանը հայերէն լեզուով ընթերցեց ուսանողների բողոքի խօսքը: Բնաբանում կարեւորութեամբ ընդգծւած էր. «Ապրիլեան Եղեռնի ոգեկոչումը պարտաւորեցնում է մեզ, որպէս երիտասարդներ, վերանորոգելով մեր ուխտը, հաւատարիմ մնալ մեր պապենական աւանդութեանն ու սրբութեանը եւ նախանձախնդիր լինել մեր ազգային արժանապատուութեան նկատմամբ, քանի որ մենք ենք մեր հայրենիքի ու սրբազան արժեքների տէրը»:

Ապա Սեւան Մնացականեանն ընթերցեց պարսկերէն լեզուով խօսքը, որում Մեծ Եղեռնի իրողութիւնը բացատրելուց բացի, նշւած էին հայ ուսանողութեան բողոքն ու պահանջատիրութիւնը:



Ուսանողների ելոյթներին յաջորդեց Հայոց Ցեղասպանութեան 97-ամեակի ոգեկոչման Նոր Զուղայի յանձնախմբի խօսքը, որը արտայայտեց ՀերմիՆԷ Բաբայեանը: Այնուհետեւ ներկաներին իր հայրական պատգամը փոխանցեց թեմակալ առաջնորդը: Սրբազան Հայրը ողջունելով հայ երիտասարդութեան արի եւ յանձնառու կերցածքը, ասաց. «Այսօր, 97 տարի յետոյ, ամբողջ աշխարհին ասում ենք, որ մենք Դեր-Չորում չընկանք եւ աւագի չվերածւեցինք: Այսօր մենք եկել ենք ասելու, որ շարունակելու ենք մեր պահանջատիրական պայքարը: Մեր երիտասարդութիւնը բռնցքացած երիտասարդութիւն է, նրա ձայնի եւ աշխատանքի դիմաց բոլոր փակ դռները կը խորտակւեն, ժայռերը կը թափւեն եւ բոլոր խղճերը կարթնանան»:

Ծրագիրն աւարտեց ծաղիկների մատուցմամբ:

Յատկանշական է նաեւ, որ այդ օրերին Վանքի շրջափակում փակցւել ու ցուցահանդէսի էին վերածւել հայոց դպրոցների աշակերտական նկարչութիւններն ու պատի թերթերը, որոնք արժանացան դիտորդների մեծ ուշադրութեանը:



**ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՒ
ԳԵՂԱՐԻԵՍՏԱԿԱՆ
ՉԵՌՆԱՐԿ ՆԻՐԻԱԾ
ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
97-ՐԴ ՏԱՐԵԼՑԻՆ՝
ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ**

Երեքշաբթի՝ ապրիլի 24-ի երեկոյեան, Հայոց Ցեղասպանութեան 97-րդ տարելիցի ոգեկոչման ծրագրերի շարանում, տեղի ունեցաւ դասախօսական եւ գեղարուեստական ձեռնարկ, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան սրահում: Ծրագրին ներկայ էին թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, քահանայից դատը, շրջանի Հայ Դատի Յանձնախմբի անդամները, Իսլ. Խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը, ազգային մարմինների ներկայացուցիչները, Սիրիայից ժամանած ազգային-հասարակական գործիչ Գրիգոր Տունկեանը եւ հոծ թուով ժողովուրդ:



Որպէս բացման խօսք, օրւայ հաղորդավարուհի Լեռնիկ Ծատուրեանը ոգեկոչման յանձնախմբի անունից ողջունելով ժողովրդի ներկայութիւնը, այսպէս արտայայտուեց. «Հայոց պատմութեան ողբալի էջերից 97 տարիներ անց, երբ դեռ թրքական նենգամիտ արարքներն սպառնում են հայի գոյութեանը, երբ դեռ միլիոնաւոր գոհերի արեան կանչը պահանջում է արդարութիւն, ինչքան էլ, որ ցաւալի լինի, բայց տեղի է ու-

նենում ազգային-մշակութային եղեռն: Սակայն նրանք անկարող են մեզանից խլել հայ միտքն ու ոգին, քանզի մեր մշակոյթը անկողոպտելի է եւ յաւերժական»: Այնուհետեւ հաղորդավարուհին ներկայացնելով օրւայ բանախօս Գրիգոր Տունկեանի կենսագրականը՝ հրաւիրեց նրան արտայայտուելու:



Պրն. Տունկեանը Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչման իւրաքանչիւր տարին, նաճած հանգրւանների ու իրագործումների վերանայման եւ մեր արդար դատի պահանջատիրութեան նոր օրերի հրամայականների համար, նոր ծրագրերի մշակման պահ համարելով՝ աւելացրեց. «Երէկ եւ այսօր մենք ամենայն երկիւղածութեամբ մեր յարգանքը մատուցեցինք մեր Բիւրաւոր Նահատակների յիշատակին, սակայն նահատակները միայն մեր մատուցած յարգանքը չեն ուզում, այլ պահանջում են իրենց նահատակութեան արժանի հատուցումը, որը նաեւ մեր քաղաքական պահանջատիրութեան էութիւնն է»: Բանախօսն իր խօսքի շարունակութեան մէջ աւելացրեց, որ այսօր մենք ո՛չ թէ կատարում ենք Հայոց Ցեղասպանութեան 97-րդ տարելիցի ոգեկոչումը, այլեւ նշում ենք մեր վերապրումի 97-րդ տարեդարձը: Իսկ եթէ մենք չզգանք, որ 97 տարիները եւ այս ընթացքում մեզ շնորհւած վերապրումն ունեն նպատակ եւ ինքնանպատակ չեն, այն ժամանակ այս թաւականը կը վերածուի միայն ոգեկոչման արարողակարգի, ինչը շատ հեռու է մեր պահանջատիրական ընթացքից:



Այնուհետեւ Գրիգոր Տունկեանն անդրադառնալով անցնող տասնամեակների ընթացքում մեր ժողովրդի պատմութեան անսովոր իրադարձութիւններին, աւելացրեց. «Թուրքիայի կողմից մեր հայրենի անկախ պետականութեանը պարտադրւած շրջափակումը վերացնելու պահանջները, դժբախտաբար ներկայացւել են որպէս հայ-թրքական հիմնահարցի խնդիր եւ լուծման առաջադրանք: Աղօտ ակնարկումները մեր իրաւունքների մասին, ո՛չ միայն Հայկական Ցեղասպանութիւնը կը պարպեն իր բարոյական արժէքից, ո՛չ միայն թուրքին կը հեռացնեն իր ամբողջական պատասխանատուութիւնից, այլեւ տակաւին արեամբ վերանաճած հայկական երկրորդ անկախութիւնը՝ Արցախը, կը վտանգեն: Որպէս ազգ եւ պետութիւն

պէտք է հաստատենք, որ Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչումը, հայութեան իրաւունքների հատուցումը եւ հողային պահանջը համահայկական խնդիրներ են, որոնք պէտք է գոյութիւն ունենան հայկական ամէն տեսակի քաղաքականութեան թղթածրարներում»:

Բանախօսն իր խօսքը շարունակեց նշելով Թուրքիայի որդեգրած հակահայ քաղաքականութեան կողմերը, ինչպիսին են՝ Հայաստանի շրջափակումը եւ տնտեսապէս կղզիացումը, Հայաստանի եւ հայութեան մեկուսացման քաղաքականութիւնը, Արցախի հիմնահարցի կապակցութեամբ իր կողմից պարտադրող լուծումները եւ Թուրքիայի հայ համայնքի նկատմամբ կիրառուող ճնշումները եւ աւարտեց. «Այսօր Յեղասպանութիւնից 97 տարիներ անց, ժամանակն է մեր պահանջատիրական խնդիրը փոխադրել միջազգային իրաւական դաշտ: Մենք իրաւունք ունենք մեզ պատկանողը ստանալ միջազգային օրէնքի չափանիշերով: Մեր պահանջը Թուրքիայից Յեղասպանութեան ճանաչումը եւ դատապարտումը չէ: Մեր պահանջը հող է: Եւ երեք տարի յետոյ, երբ պէտք է նշենք Յեղասպանութեան 100-ամեակը, այնտեղ եւս պիտի անդրադառնանք, որ նոր հանգրւան ենք տեղափոխում մեր պահանջատիրութիւնը»:

Ծրագրի գեղարեստական բաժնում, երգեցողութեամբ ելոյթ ունեցաւ Ս. Ամենափրկչեան Վանքի «Տաթև» երգչախումբը՝ ղեկավարութեամբ խմբավար Համիկ Ալեքսանդրեանի: Երգչախումբն անգուգական կատարմամբ՝ ազգային-յեղափոխական հինգ ոգեշնչող երգեր հրամցրեց ներկաներին, որոնք էին՝ «Խաղաղ դաշտի որդիք», «Նոյան աղանիւն», «Ապրիլեան նահատակներուն», «Սասուն» եւ «Քաջ Անդրանիկ» երգերը:

Այնուհետեւ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Մշակութային Միատրի «Կուռնկ» ասմունքի եւ պարի խումբը՝ համագործակցութեամբ Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» պատանեկան երգչախմբի, իրակա-

նացրեց մի ներկայացում, որն սկիզբ առաւ Մետաքսէի «Դիւ Եաման» բանաստեղծութեամբ՝ Կարէն Խանլարեանի կատարմամբ,



պապ «Դիւ Եաման» երգը կատարեց Թանհա Մինասեանը: Վահագն Դաթեանի գրչին պատկանող «Ռեքլիւմ» բանաստեղծութեամբ, Ալինա Տէր-Սուքիասեանի միջոցով եւ պարախմբի անդամների պարային շարժումներով՝ լաւապէս պատկերեց դէպի անպատ տարող կանանց դառն հոգեվիճակն ու նրանց տարած տանջանքները:



Գեղարեստական բաժնի շարունակութեան մէջ հայի պահանջատէր ոգին ներկայացրեց Պարոյր Սեւակի «Եռաձայն պատարագ» բանաստեղծութեան մի հատուածով՝ Մանհա Ղուկասեանի կատարմամբ: Իսկ ներկայացման աւարտին Վանա Ծիրանեանը կատարեց «Կլիկիա» երգը: Յատկանշական է, որ պարային շարժումներով հանդէս եկան՝ Վանէ Ծափիջանեանը, Սուէ Մինասեանը, Մեղեդի Հայրապետեանը, Անի Ասատրեանը, Սիւնէ Ծափիջանեանը, Աւեհիա Բաղրամեանը եւ Վանէ Իսաղուպեանը: Վերոնշեալ ներկայացումն իրականցեց ղեկավարութեամբ՝ Ռիմա Սիմոնեանի ու Կարին Տէր-Մարտիրոսեանի եւ համագործակցութեամբ «Կոմիտաս» երգչախմբի խմբավար Արմէն Ամիրխանեանի:

Շարունակութիւն՝ 24-րդ էջում



**ՏԵՂԻ ՈՒՆԵՅԱՆ
24-ՐԴ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ
ԽԱՂԵՐԸ ՆԻՐՐԻԱԾ
ՀՈՒՇԻ
ԱԶԱՏԱԳՐՄԱՆ
20-ԱՄԵԱԿԻՆ**

Իրանահայ Գարնանային 24-րդ խաղերի հանդիսատեսները, որը ներկայումս էր Շուշիի, ազատագրման 20-ամեակին, ներկայությամբ պաշտօնական հրապարակների եւ հոծ բազմության, տեղի ունեցաւ երկուշաբթի՝ սույն թուականի մարտի 19-ին, երեկոյան ժամը 6:30-ին խաղերը կազմակերպող Ն.Զ. Հայ Մ.Ս. «Արարատ» Միութեան մարզաքարտի:



Հանդիսութեան պաշտօնական բաժինն սկսեց հանդիսավարներ Մանիա Ղուկասեանի եւ Արթին Մուրադեանի ողջունի եւ բացման խօսքով, որից յետոյ Միութեան Սկաուտական Միաւորի Արի-արեւմուտական հատուածի մասնակցութեամբ կատարեց դրօշակի արարողութիւնը եւ ներկաների յոտնկայս ունկնդրութեամբ հնչեց Իրանի Իսլ. Հանրապետութեան հիմնը, որին յաջորդեց մարզական պատուիրակութիւնների տողանցը, մասնակցութեամբ Թեհրանի



Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութեան (Հ.Մ.Ա.Կ), Հայ Մ.Ս. «Սարդարապատ» եւ Հայ Մ.Ս. «Սիւհան» միութիւնների, Հայ Մ.Ս. «Րաֆֆի» Համալիրի, Հ.Մ.Ա.Կ-ի Թաւրիզի Մասնաճիւղի, Փերիոյ

Կրթ. Միութեան Ծափնշահրի Մասնաճիւղի, Ն.Զ. Հայ Մ.Ս. «Արարատ» Միութեան եւ Ծափնշահրի Մասնաճիւղից ներկայացած մարզիկ-ուսիւնների:



Միութեան Կենտրոնական Վարչութեան խօսքով ելոյթ ունեցաւ նախագահ Վարուժ Մինասեանը, որը շնորհակալական խօսքերի կողքին ասաց. *«Իրանահայ 24-րդ Գարնանային խաղերը նւիրեցին հայ ժողովրդի արդի պատմութեան ամենապանծալի էջերից՝ Շուշիի ազատագրման 20-ամեակին. պատմութեան մի էջ, որով պայմանաւորեց Արցախեան ազատամարտի հետագայ յաղթանակները՝ նրա անկախութիւնն ու ազատութիւնը, որից յետոյ, ողջ հայրենիքի համար Շուշի բառի առաջին եւ հիմնական իմաստը դարձաւ մէկ բառ՝ ԶԱՂԹԱՆԱԿ, իսկ յաղթանակները ձեռք են բերուած ազգային միասնութեան ոգով: Հայր զօրեղ է, իսկ միասին անպարտելի. առաւել եւս կենսական է խտացեալ կամքն ու որակը: Այս է պատգամը եւ խորհուրդը, որ պիտի քաղենք Շուշիի յաղթանակից եւ սփիւռքեան պայմաններում դարձնենք խթան եւ ուղեցոյց՝ մեր միութենական կեանքում»:*



Սույն մարզական փառատօնի առթիւ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարբէն եպս. Չարեանի պատգամն ընթերցեց հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, որում ասաւ թէ. *«Այսօր առիթ է անդ-*

րադառնալու նաեւ նրան, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսը 2012 թվականը հռչակեց «Հայ Գրքի» տարի. միաժամանակ Հայ տպագրութեան 500-ամեակն է: Մեր բոլորի սեւեռակէտը պիտի լինի Հայ գիրքը: 2012 թվականին բոլորս ժամագրւել ենք Հայ գրքի հետ՝ հաղորդւելու համար Հայ գրերի իմաստով ու արժէքով եւ այն ընդունելու, որպէս կեանքի անբաժան ընկերը եւ ուղեկիցը... Միայն Հայ գրով կարող ենք ապահովել մեր



ժողովրդի ապագան: Աստուծո՛ւ շնորհած մեծագոյն բարիքը կեանքի հետ միասին, ժամանակն է, սակայն կարեւորն այն է, որ ինչպէս ենք օգտագործում այն եւ որքանով ենք արժեւորում մեզ տրւած ժամանակը: Արդեօք իմաստութե՞ամբ օգտւում ենք ժամանակի մեզ տրւած պատեհ առիթից: Հետեւաբար, եկէք լցնենք ժամանակը՝ գիրք կարդանք եւ Հայ գիրքը դարձնենք Պատիւը հայուն...»:



Ելոյթների շարանում, ի յարգանք պարսիկ հրաւիրեալների, պարսկերէն լեզուով ելոյթ ունեցաւ Իրանի Իսլ. Խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բէգլարեանը:

Արտայայտուեց նաեւ Սպահան քաղաքի հինգերորդ շրջանի քաղաքապետ Ճարտ. Ասառզադեգանը:



Այնուհետեւ մուտք գործեց ջահակիր խումբը՝ իր հետ բերելով Ս. Ամենափրկչեան Վանքի շրջափակում գտնուող Ապրիլեան Եղեռնի Նահատակաց Յուշակոթողի կրակով վառած ջահը եւ այն փոխանցեց գլխաւոր ջահակիր՝ Փուտրուխտ եւ Միութեանս մարզիչներից՝ Վահիկ Թորոսեանին, որով եւ բոցավառուեց՝ 24-րդ Գարնանային խաղերի խորհրդանշական կրակը:



Նշելի էր, որ մինչ բացման հանդիսութիւնը, ներկայութեամբ ազգային իշխանութեան եւ Միութեանս Կենտրոնական Վարչութեան ներկայացուցիչների, ջահը վառել եւ օրհնել էր Ծահինշահրի հայ համայնքի հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը եւ այն յանձնել էր ջահակիր խմբին, որոնք ներկայացնում էին երկրի եւ նահանգի մակարդակում յաջողութիւն արձանագրած մարզիկ-ուրիշներ՝ Արթուր Խուրաբախչեան, Թաղէ Ղարիբեան (կատաւէի ճիւղից), Տարօն Բաղումեան (գնդի հրում), Սիւնէ Ուղուրեան, Նիկէլ Մարկոսեան, Անայիս Խուրավերդեան, Զարինէ Ղարիբեան (բասկետբոլ) Արինէ Իսաղուլեան, Անի Մկրտչեան (լող), Թոմիկ Բաղրամեան (ֆուտբոլ), եւ Ադրիան Ծատուրեան (մինի բասկետ-

բով) մարզաճիւղերից: Այս յուզիչ եւ միաժամանակ խանդավառ ուրախութեամբ լեցուն պահին յաջորդեց երդման կարգը՝ մարզիկների եւ իրաւարար կազմի ներկայացուցիչներ Արիւն Յովսէփեանի եւ Արիւս Անդրիասեանի միջոցով:



Մարզական ցուցական բաժինը տեղի ունեցաւ Միութեան կառաւէի խմբերի մասնակցութեամբ, մարզիչ Էհսան Աշթառիի ղեկավարութեամբ:



Գեղարեստական յայտագիրը յագեցած էր պարի ու ասմունքի համադրութեամբ՝ գարունն աւետող մի ուշագրաւ ներկայացումով, որն իրականացրին Մշակութային Միատրի «Կուունկ» համոյթի ասմունքի խմբի անդամուհիներից եւ կրտսեր պարախմբի սաները՝ բեմադրութեամբ ասմունքի խմբի ղեկավար Ռիմա Օհանեանի եւ նոյն խմբի անդամ Կարին Տէր-Մարտիրոսեանի, իսկ աւագ պարախումբը հանդէս եկաւ նազպար, բերդպար եւ վալս պարային համարներով՝ պարուսույց Նոնա Բաշխեանի ղեկավարութեամբ, գեղարեստական բաժինը համալրեց Միատրի Էստրադային խմբի երգիչ-ուհիների կատարումներով՝ ղեկավարութեամբ մայեստրո Արմէն Ամիրխանեանի:



Բացման հանդիսութիւնն իր աւարտին հասաւ իրանահայութեան եւ Ֆուլադէ Մահան Սեփահանի երիտ. բասկետբոլի ընտրանի թիմերի միջեւ ընկերա-

կան խաղով:

Հնգօրեայ մարզական սույն փառատօնի ընթացքում մրցադաշտ իջան՝ աւելի քան 280 մազիկ-ուհիներ: Մրցութիւնները տեղի ունեցան ֆուտբոլ, բասկետբոլ, թեթեւատլետ եւ սեղանի թենիս մարզաճիւղերում:

ԻՐԱՆԱՀԱՅ 24-ՐԴ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԽԱՂԵՐԻ ՓՎԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄՐՅՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՐԴԻՒՆՔԸ

Մարտի 23-ի երեկոյեան, Ն.Ձ. Հայ Մ.Մ. «Արաւրատ» Միութեան մարզասրահում տեղի ունեցաւ 24-րդ Գարնանային Խաղերի փակման եւ մեդալաշընորհման հանդիսութիւնը, որտեղ հանդիսավարութեամբ Մանիա Ղուկասեանի, նախ հրաւիրեց եւ հայրական իր խօսքով ելոյթ ունեցաւ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարբէն եպս. Չարեանը:



Սրբազան Հայրը բարձր գնահատելով խաղերի կազմակերպումը, իր ուրախութիւնը յայտնեց, որ խաղերը ձօնած էին Շուշիի ազատագրման 20-ամեակին: Ողջունելով երկրի զանազան քաղաքների հայ մարզիկ-ուհիների ու բոլոր պատասխանատուների մասնակցութիւնը՝ նման մրցութային խաղերին, այն որակեց հպարտութեան եւ ուրախութեան առիթ եւ մասնակցութիւն՝ մեր ժողովրդի յաղթական երթին: Նա նաեւ իր ուրախութիւնը յայտնեց Ատրպատականի Հայոց Թեմի կաթողիկոսական փոխանորդ գերապ. Տ. Գրիգոր Ծ. վրդ. Չիֆթեանի ներկայութեան համար՝ ուժ ու կորով եւ բարի ու արդիւնաւէտ ծառայութիւն մաղթելով Հայր Սուրբին: Սրբազան Հայրը գնահատանքի խօսք ուղղեց նաեւ ժողովրդին, որոնք իրենց ներկայութեամբ քաջալերեցին մազիկ-ուհիներին եւ մասնակիցը դարձան այս յաղթանակի փառատօնին:

Այնուհետեւ մրցանակակիր մարզիկ-ուհիներին յանձնեց նաճած մեդալները, գաւաթներն ու գնա-



հատագրերը թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի, գերպ. Տ. Գրիգոր Ծ. վրդ. Չիֆթճեանի, Միութեան արտօնատէր Թաթուլ Օհանեանի, ազգային իշխանութեան եւ Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչների, Միութեան Կենտրոնական Վարչութեան, Մազական Միաւորի ու գործադիր յանձնախմբի անձնակազմի միջոցով, որից յետոյ Սկաուտական Միաւորի Արեւուշական եւ Երէցների հատուածի մասնակցութեամբ կատարւեց դրօշակի վար բերման արարողութիւնը, որին յաջորդեց խաղերի խորհրդանշական կրակի մարումը:



Գեղարեստական բաժնում երգերով ելոյթ ունեցաւ Մարտիկ Յովհաննիսեանը, իր նւագախմբով, նաեւ ցուադրուեց խաղերի ընթացքից պատրաստուած «Անցուդարձ» խմբի տեսանիւթը:



Նշելի է, որ մինչ փակման հանդիսութիւնը, պատօնական հրաւիրեալների եւ ներկայ հոծ բազմութեան խրախուսանքների ներքոյ, տեղի ունեցաւ Թեմ-

րանի Հ.Մ.Ա.Կ.-ի եւ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ»



Միութեան տղայոց երէց բասկետբոլի մրցութիւնը, որին սեղմ մրցակցութեան արդիւնքում յաղթեց Նոր Զուղան:



Իրանահայ 24-րդ Գարնանային Խաղերն ասարուեցին մասնակից մարզիկ-ուրիշների, մարզիչների, պատասխանատուների, իրաւարար կազմի եւ միութիւնների սերտ համագործակցութեամբ:

Հնգօրեայ սոյն խաղերի ընթացքում իրենց անվերապահ համագործակցութիւնը ցուցաբերեցին Մարզական, Երէցական, Մշակութային, Սկաուտական եւ Ուսանողական միաւորները, կարգապահական կազմը եւ անհատներ:

Արժէ նշել, որ գեղեցիկ երեսոյք էր՝ Իրանի բասկետբոլի ազգային հաւաքականի կազմից, Թեհրանի եւ Նոր Զուղայի հայ մարզիկների համեստ մասնակցութիւնը այս մրցութիւններում:



ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ ՄԻԱՍՆԱԲԱՐ ՆԵՒՆՑ ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱԳԱՅԻՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ

Քրիստոսի հրաշափառ Ս. Յարութեան Տօնի առթիւ եկեղեցական արարողութիւններից յետոյ, կիրակի՝ ապրիլի 8-ի երեկոյեան, Ն.Ձ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան կենտրոնատեղիում համախմբել էին Շահինշահի եւ Նոր Զուղայի բնակչութիւնից մեծաթիւ հայորդիներ եւ «Հակթախաղ-տօնահանդէսի» տեսքով միասնաբար նշեցին Ս. Զատիկը եւ նրան զուգահիւսած Հայ Մայրերի Օրը:

Նախաձեռնութիւնը պատկանում էր Ն.Ձ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Երէցների Միաւորի Վարչութեանը, որի անունից ողջոյնի եւ շնորհատրանքի խօսքով հանդէս եկաւ Միաւորի անդամ Սեդա Բարդեանը եւ օրւայ խորհրդի առթիւ բացատրութիւններ փոխանցեց ներկաներին: Հանդիսութեանն իրենց համագործակցութիւնը բերեցին Միաւորի ամբողջ կազմը՝ մատակարարելով ներկած հակիթներ, թխածքներ, աւանդական ճաշեր ու այլ ուտեստեղէններ, ինչպէս նաեւ կազմակերպել էր խաղեր, իսկ Միութեան Մշակութային, Մարզական եւ Սկստութեան միաւորները, «Արմէն», «Քանաճեան» եւ «Կատարինեան» հայոց դպրոցները, Ն.Ձ. Հայ Կանանց Գթութեան (Կարմիր Խաչ) Միութիւնը, Ն.Ձ. Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը, եւ Փերիոյ Կրթասիրաց Միութիւնը համագործակցել էին տարբեր խաղեր կազմակերպելով:

Ստեղծած տօնական տրամադրութիւնը, միասնական աշխատանքի արդիւնք էր, որն իր տեսակի մէջ գնահատելի երեւոյթ էր եւ խորը տպաւորութիւն թողեց թէ կազմակերպիչների եւ թէ տօնահանդէսին մասնակցած իւրաքանչիւր անհատի մօտ:



ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԸ՝ ՄԱՐՏԻ 8-Ը ՆԵՒՆՑ ՄԻԱՍՆԱԲԱՐ



2012 թականի մարտի 8-ին, Ն.Ձ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան յարկի ներքոյ, հայ համայնքը միասնաբար նշեց Կանանց Միջազգային Օրը, որով սկսեց նաեւ հայ կանանց միամսեակի տօնը: Թէեւ անցեալում ներքին տօնականտարութեամբ այս գեղեցիկ օրը նշում էր Միութեան Երէցական բաժանմունքի նախաձեռնութեամբ, սակայն այս անգամ մարտի 8-ը միասնաբար նշելու գաղափարը պատկանում էր Մշակութեան Միաւորի Վարչութեանը,

որը համագործակցութեամբ Երէցական Միաւորի Վարչութեան ու անդամ-ուհիների սերտ համագործակցութեամբ, երեկոն դարձրին գեղեցիկ ու անմոռանալի: Այդ օրը ուշադրութեան կենտրոնում էին կանայք ու աղջիկները: Մոմերով, ծաղիկներով, քաղցրաւենիքներով ու փուչիկներով նախատեսած կրպակում ներկաների համար ծաղիկներ նւիրելու հնարարութիւն էր ստեղծած, նախատեսել էր նաեւ խաղերի կրպակ, իսկ Երէցական բաժանմունքը ինչպէս միշտ իր համագործակցութիւնը բերեց բիֆէի պատասխանատութեան ստանձնումով:



Վերջում կազմակերպիչների անունից շնորհատրանքի խօսքերով հանդէս եկաւ Նայիրի Թահմազեանը, եւ ներկաներին հրաւիրեց կամաւոր կերպով մասնակցել օրւայ առթիւ արտայայտելու մրցոյթին, որից յետոյ լաւագոյն արտայայտողը պարգեւատրուեց յուշանւէրով:

**ԹԵՂՐԱՆԻ ՀԱՅՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ «ԱՐԱՐԱՏ»
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԵՒ Ն.Զ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀՄՆԴԻՊՈՒՄ**

2012 թվականի մարտի 8-ին տեղի ունեցավ Թեհրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպության եւ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միության պատասխանատուների պաշտօնական եւ ցանկալի հանդիպումը: Թեհրանից Նոր Զուղա էին ժամանել «Արարատ» Կազմակերպության Կենտրոնական Վարչության նախագահ Կարոյն Սարգսյանը, Կենտ. Վարչության անդամ եւ Սկսուտական Միության կապ պրն. Հրաչ Զարիֆեանը եւ Մարզական Միության նախագահ պրն. Սեպուհ Ծահրազեանը:



Կայացած խորհրդատվորակ առաջ, հիւրերը Միության Կենտրոնական Վարչության անդամների հետ միասնաբար այցելեցին Միության տարածքում գտնուող շէնքերը, գրասենյակները, նորակառուց սրահը եւ միւս բաժինները: Հանդիպման պաշտօնական բաժնում Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միության Կենտ. Վարչության նախա-

գահ պրն. Վարուժ Մինասեանն արտայայտեց բարիգալստեան խօսքեր, ապա ի պաշտօնէ եւ յ անանէ ներկայացնեցին երկու կառուցների Կենտրոնական Վարչությունների անդամները եւ պատասխանատուները, ապա ծանօթացան միմեանց աշխատանքային ոճի, կառավարման եղանակի եւ տնտեսական միջոցների հայթայթման խնդիրներին: Օրակարգի յաջորդ բաժնում կատարեց մի շարք համադրություններ եւ մշակեց հետագայում միասնաբար աշխատելու սկզբունքով մի շարք ծրագրեր:

Գործնական հանդիպման օրակարգն սպառեց հոգեհարազատ մրթնուլորտում, ապա մտերմիկ սեղանի շուրջ հիւրընկալեցին ժամանած հիւրերը, որտեղ ներկայ էին Միության արտօնատէր պրն. Թաթուլ Օհանեանը, նախորդ Կենտ. Վարչությունների նախագահներ պարոնաք Մասիս Մինասեանը եւ Վիգէն Մովսիսեանը, Թեմական Խորհրդի նախագահ պրն. Նոէլ Մինասեանը, Թեմի Պատգ. Ժողովի պատգամաւոր պրն. Վահիկ Խուդաբախշեանը, Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչ պրն. Վարուժ Մովսիսեանը:

*Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան
Կենտրոնական Վարչութիւն*

Շարունակութիւն՝ 18-րդ էջից

ԴԱՍԱՆՕՍԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐԻԵՍԱԿԱՆ ՉԵՌՆԱՐԿ...



Որպէս եզրափակիչ ելոյթ իր հայրական օրհնանքը փոխանցեց գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանը:

Առաջնորդ Սրբազան Հայրը շնորհակալութիւն յայտնելով բոլոր այն անձնաց, ովքեր անցնող օրերի ընթացքում մասնակցել էին ոգեկոչման ծրագրերին՝ անելացրեց. *«Գնահատանք ձեզ, որովհետեւ դուք փաստեցիք որ տէրն էք մեր սրբութիւնների, դուք փաստեցիք որ ձեր ձայնը կարող էք լսելի դարձնել թուրքին եւ աշխարհին»:* Այնուհետեւ նա իր խօսքի շարունակութեան մէջ արտայայտելով, որ 1915 թվականին կատարւած իր դաժանութեան եւ հետեանքների առումով չի կարելի համեմատել մեր պատմութեան մէջ արձանագրւած այլ աղէտների հետ, անելացրեց. *«Ժողովուրդները չեն մեռնում, երբ տարագիր են դառնում, երբ հայրենագուրկ են լինում: Նրանք մեռնում են, երբ հայրենիքի գողափարն է մեռնում նրանց մէջ, երբ մեռնում է նաեւ նրանց ոգին ու հաւատը: Մենք պիտի շարունակենք մեր ճանապարհը եւ պիտի փաստենք, որ մեր ժողովուրդը կարող է ստեղծագործող ու ապրող ժողովուրդ լինել եւ կարող է իր պայքարը շարունակել»:* Սրբազան Հայրն իր խօսքի ավարտին գնահատանքի խօսք ուղղեց 97-ամեակի ոգեկոչման Նոր Զուղայի յանձնախմբին եւ բոլոր այն անձանց, ովքեր յանձնախմբի հետ միասնաբար աշխատել էին ծրագրերի կազմակերպման համար:

ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՌԻՆՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ՝ «ԼՈՒՍԱՀԱՆԳԻՍ» ՎԱՅՐՈՒՄ

Փերիա գաւառի Վերին Խոչգան գիւղի մօտ բլրի վրայ գտնուում է մի փոքրիկ սրբավայր, որը կոչւում է «Լուսահանգիստ»: Այնտեղ ամփոփւած է Գրիգոր անունով մի հաւատացեալ քրիստոնեայ, որը Շահ Աբբասի ժամանակներում նահատակել է յանուն քրիստոնէական հաւատի: Նրա դամբարանի վրայ լոյս է ճառագել եւ այդ պատճառով վերածել ուխտատեղիի, որի ուխտագնացութիւնն ասանդաբար տեղի է ունենում Ս. Յարութեան Տօնին յաջորդող Նոր Կիրակի կամ Կրկնազատկի օրը, թէւ վերջին տարիներում, որպէսզի ժողովուրդն ատելի շատ հնարարութիւն ունենայ մասնակցելու արարողութեանը, յատուկ կարգադրութեամբ այն կատարում է Կրկնազատկին նախորդող ուրբաթ օրը:



Այս առթիւ Սպահանի Հայոց Թեմի Կրօնական Խորհրդի յայտարարութեամբ, ուրբաթ՝ ապրիլի 13-ին, այդ սրբազան գերեզմանի շուրջ կատարւեց Հոգեհանգստեան արարողութիւն՝ թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի նախագահութեամբ:



Ներկայ էին հոգեւորականներ, ազգային մարմինների ներկայացուցիչներ եւ բազմահարիւր ուխտատուներ:

Գերշ. Սրբազան Հայրը քարոզի ընթացքում ընդգծելով Քրիստոսի ճշմարիտ հաւատով մինչեւ այսօր մեր գոյատեւումը, որպէս հայ քրիստոնեայ, ասաց. *«Մենք եւս որպէս Քրիստոսի Յարութեանը հաւատացող ժողովուրդ, քայլեցինք դէպի Գողգոթա՝ դժարութիւններ կրեցինք, նեղութիւններ յանձն առանք, նոյնիսկ նահատակեցինք, սակայն միշտ հաւատարիմ մնացինք առ Աստուած մեր հաւատի մէջ, յարութեան եւ անմահութեան յոյսն ունենալով»:*

Սրբազան Հայրն իր քարոզն եզրափակեց՝ յորդորելով յատրժ պահել այդ գեղեցիկ սովորութիւնը եւ մաղթեց, որ ներկայ հաւատացեալների ուխտն ընդունելի լինի բարձրեալ Աստծուն:

Լուսահանգստի ուխտագնացութեան առիթով Հայ Ոս. Զհարմահալ Միութեան Նոր Զուղայի Մասնաճիւղի, Փերիոյ Կրթասիրաց Միութեան Կենտրոնական եւ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Շահինշահի Մասնաճիւղի վարչութիւնները կազմակերպել էին ուխտատուների տեղափոխում Նոր Զուղայից եւ Շահինշահի:

Հակառակ մերդ ընդ մերթ տեղացող յորդառատ անձրեւին, որը խիստ դժարացրել էր երթելելութիւնը, զանազան քաղաքներից ու գիւղերից ուխտավայրում հաւաքել էին բազմաթիւ հաւատաւոր հայեր: Նրանք մասնակցեցին Հոգեհանգստեան արարողութեանը, ունկնդիր եղան Սրբազան Հօր քարոզին, խունկ ծխեցին, մոմ վառեցին եւ իրենց աղօթքը բարձրացրեցին առ Աստուած:

Կէսօրին ուխտատուները հանգրրւանեցին Նամակերտի նախկին ազգային հիւանդանոցում, Ղարդուն եւ Սնկերտ գիւղերում:

Հանգստանալուց յետոյ, թեմակալ առաջնորդ Սրբազան Հայրը, նրան ուղեկցող անձինք եւ ողջ ուխտատուները լիցքաւորւած օրւայ խորհրդով՝ վերադարձան իրենց շրջանները:

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՒՂԵԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ՄԵԾ ՇՈՒԲՈՎ ՏՕՆԵՅ ՄԱՅՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԵՂԵՅԿՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ

Նախաձեռնությամբ Նոր Զուղայի Հայուհեաց Բարեգործական Ընկերության Վարչության եւ համագործակցությամբ Միության 120-ամեակի միջոցառումների կազմակերպիչ յանձնախմբի, հինգշաբթի՝ ապրիլի 12-ի երեկոյեան, Ն.Ձ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միության սրահում տեղի ունեցաւ Ս. Կոչսի Աւետման տօնին՝ Մայրերի Օրան ներկայացուցող, որով մեկնարկ տրուեց նաեւ Ընկերության 120-ամեակին ներկայացուցող միջոցառումներին:



Ձեռնարկին ներկայ էին՝ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, արժն. Տ. Վաղինակ աւ. քհնյ. Ըահիչանեանը, Խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայության պատգամատուր Ռոբերտ Բեգլարեանը, ազգային մարմինների ներկայացուցիչները, Բարեգործական Ընկերության անդամուհիներն ու հոծ թուով բազմութիւն:



Ձեռնարկն սկսեց Բարեգործական Ընկերության անունից ողջոյնի եւ բարիգալստեան խօսքով, որը ներկաներին փոխանցեց Վարչության անդամ եւ օրւայ հաղորդավարուհի Լիդա Վարդանեանը: Նա իր բացման խօսքն սկսեց մօրը ձօնուած մի գեղեցիկ բանաստեղծութեամբ, որից յետոյ կարեւորութեամբ ընդգծելով հայ մօրը բնութագրող յատկութիւնները, այսպէս շարունակեց. «Այս ամենամեայ միջոցառ-

մամբ մեծարուած ենք հայ մայրերին, որոնք ոչ միայն մեզ կենսք են պարգեւել, այլեւ իրենց անձն են զօհաբերել մեր երջանկութեան համար: Հայ մայրը անկեղծ սիրոյ եւ անսակարակ նւիրումի խորհրդանիշ է»:



Այնուհետեւ հաղորդավարուհին ներկայացնելով օրւայ բանախօս, բանասիրական գիտութիւնների թեկնածու, Սպահանի Պետական եւ Թեհրանի Ազատ համալսարանների Հայոց Լեզւի եւ Գրականութեան Ամբիոնի դասախօս դոկտ. Սիլւա Ալլահվերդեանի կենսագրականը, բեմ հրաւիրեց նրան՝ օրւայ առթիւ արտայայտելու:

Օրւայ բանախօսը նախքան բուն նիւթին անցնելը ներկաներին շնորհատրեց Քրիստոսի Յարութեան եւ Մայրութեան ու գեղեցկութեան տօների առթիւ՝ դիրքին եւ միեւնոյն ժամանակ դժար համարելով մօր մասին արտայայտելը: Այնուհետեւ նա կարեւորութեամբ ընդգծելով, որ հազւադէպ եւ կարող մատնանշել մի բանաստեղծի, որ չունի մօրը ձօնուած բանաստեղծութիւն կամ քառեակ, յիշատակեց մի շարք անունի հայ բանաստեղծների անունները, որոնք գովերգել են մօր անծայրածիր սէրը եւ շարունակեց. «Հեթանոսական ժամանակաշրջանից ի վեր, հայ ազգի դարաւոր պատմութեան էջերում, իւրաքանչեւ տեղ ու նշանակութիւն է վերապահել մայրութեան երեւոյթին, որին ազգը սրբացրել ու օրհնեցել է եւ նրանից հայցել է պաղարբերութիւն եւ բարի կամք»: Դոկտ. Ալլահվերդեանը նշումներ կատարելով ռազմի եւ պաղարբերութեան աստուածուհի Անահիտի եւ Մարիամ Աստուածամօր մասին, որոնք եղել են մայրութեան եւ սրբութեան խորհրդանիշերը՝ այսպէս ավելացրեց. «Հայոց պատմութիւնը եւ հայ գրականութիւնը սողորւած են բազմաթիւ օրինակներով, որոնցում ոչ միայն ամենուրեք ներկայ է հայ մայրը, այլեւ ժողովուրդը նրան հերոսացրել, աստուածացրել եւ դիցաբանական ուժ ու հմայք է վերագրել»: Նա իր խօսքի աւարտին հայոց պատմութեան եւ գրականութեան հնադարեան եւ նոր էջերից մէջբերեց հայ արիասիրտ եւ հայրենասէր մօր կերպարին

առնչող հատուածներ եւ ասաց. «Բոլորովին էլ պատահական չէ, որ հայ ազգը մայր է անւանել իր հայրենիքին ու իրեն կեանք պարգեւող բնաշխարհին՝ այն կոչելով մայր Հայաստան: Սա ինքնին վկայում է այն մասին, որ մեզ համար առյաւէտ զուգակցւած եւ միմեանց հիւսւած ու ձուլւած են Աստուծոց յետոյ երկու գերագոյն սէրերը՝ մեզ կեանք պարգեւող մայրը եւ մեզ ինքնուժիւն պարգեւող հայրենիքը»:



Ծրագրի երկրորդ բաժնում իրականացւեցին ասմունքներ եւ մեներգեր, որոնցով առաւել բարձրացաւ հանդիսականների, ի մասնաւորի սրահում ներկայ մայրերի տօնական տրամադրութիւնը:



Մօր եւ սիրոյ թեմաներով երգերը հիմնականում կատարւեցին քաղցրաձայն երգչուհի Փարելի Ամիրխանեանի միջոցով, իսկ երիտասարդ երգիչներ Արգին Չհարմահալին ու Սարմէն Ծահմիրզայեանը իրենց անզուգական կատարումներով առանձնաբար մի երգ նւիրեցին բոլոր մայրերին՝ այս գեղեցիկ առիթի կապակցութեամբ:

Գեղարեստական բաժնում մօրը նւիրած բանաստեղծութիւնների սքանչելի կատարումներով իրենց անդրանիկ ելոյթն ունեցան Բարեգործական Ընկերութեան «Փարոս» նորաստեղծ ասմունքի խմբի անդամուհիներ՝ Արեգա Ծատուրեանը, Վանէ Ծահմագարեանը, Վանիա Պետրոսեանը, Վեհանուշ Խուդա-

բախշեանը, Վանէ Թահմագեանը եւ Մեղրի Կարապետեանը՝ ղեկավարութեամբ դոկտ. Սիլւա Ալլահվերդեանի:

Յատկանշական է, որ գեղարեստական բաժնի ամբողջ ընթացքը համեմատ էր սրամիտ խօսքերով ու մէջբերումներով, որը կատարւեց հաղորդավարուհու միջոցով:



Ծրագրի վերջին բաժնում փակման խօսքով ելոյթ ունեցաւ Ծահինշահի հայ համայնքի հոգետր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը: Նախ հոգշ. Հայր Սուրբը Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանի անունից գնահատանքի խօսք ուղղեց Բարեգործական Ընկերութեանը՝ այս գեղեցիկ միջոցառման կազմակերպման կապակցութեամբ, ապա իր հայրական օրհնանքն այսպէս փոխանցեց. «Մեր մայրերը որպէս նոր կեանքի, նոր շնչի եւ նոր մտքի ռահվիրաներ՝ միայն ու միայն արժանի են գնահատանքի: Մեր մայրերը մեզ համար դարձել են դպրոց ու եկեղեցի: Մեր մայրերը մեզ համար դարձել են Աստուծամայր, բառի բուն եւ ամբողջական իմաստով, եւ այս պատճառով է, որ հայ մայրը նմանել է Ս. Կոյս Աստուծամօրը»: Այնուհետեւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանն իր խօսքի շարունակութեան մէջ գնահատելով օրւայ բանախօսի ելոյթը եւ գեղարեստական բաժնի կատարողներին՝ մօրը մեծարելու համար, ասելացրեց. «Եթէ ապրում եւ առողջ ենք, դա մեր գիտակից մայրերի շնորհիւ է: Այսօր, երբ աղօթում ենք եւ խօսում ենք հայերէնով, դա մեր մայրերի տւած դաստիարակութեան շնորհիւ է: Եւ երբ մեր ազգային, կրօնական եւ մշակութային սրբուժիւններն ենք պահպանում, դա դարձեալ մեր սուրբ մայրերի շնորհիւ է»: Հոգշ. Հայր Սուրբն իր խօսքն ասարտեց շնորհաւորանք ուղղելով Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան 120-ամեակի առիթով:

Ծրագրի ասարտին կից սրահում տեղի ունեցաւ ընդունելութիւն:

ՄԱՅՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԵՂԵՅՎՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ՆԻԻՐԻԱԾ ՄԻՋՈՅԱՌՈՒՄ՝
Ն.Ջ. ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԾԵՐԱՆՈՅԻ ՀԱՐԱԶԱՏ ՅԱՐԿԻ ՏԱԿ



Այն նկատառումով, որ հայ մայրերը հանդիսանալով մեր ընտանիքների հիմնասիւնները, մշտապես եղել եւ լինելու են, թէ՛ իրենց ընտանիքների գոյատեւման ու բարգաւաճման եւ թէ՛ ազգապահպանման կարեւոր գործոններից եւ արժանի են գնահատման եւ արժեքաւորման, երկուշաբթի՝ 16 ապրիլի կէսօրից յետոյ, Ն.Ջ. Հայոց Ազգային Ծերանոցում մտերմիկ եւ ջերմ մթնոլորտի ներքոյ նշեց Մայրերի Օրը, որին ծերանոցի տարեց բնակիչներից ու սույն կենտրոնը կառավարող Ն.Ջ. Հայ Կանանց Գթութեան Միութեան անդամուհիներից բացի, հրաւիրել եւ ներկայ էին արժն. Տ. Վազգէն քհնյ. եւ երեցկին Սեւան Քէօշկերեաններն ու տարեցների հարազատները:

Նա ողջունելով բոլորի ներկայութիւնը, Վարչութեան եւ կազմակերպիչ յանձնախմբի անունից շնորհաւորանքի խօսք ուղղեց ներկաներին՝ Յիսուս Քրիստոսի Յարութեան եւ Մայրութեան ու Գեղեցկութեան Տօների առթիւ ու այսպէս ասելացրեց. «Մեր պատմութեան բոլոր էջերում, Հայ կինը հանդիսացել է իր ընտանիքի հիմնասիւնը: Յատկապէս Եղեռնեան տարիներին, երբ հայրենի հողից զրկւելով անապատի ճանապարհ բռնած հայերը ստիպւած եղան ապաստան գտնել անձանօթ ու խորթ երկրներում, Հայ մօր ներքում, հաւատի եւ գոհողութեան շնորհիւ էր, որ Հայ ազգը ոտքի կանգնեց եւ իր երթը շարունակեց դէպի լուսաւոր ապագայ: Հայ մօր գոհաբերութիւնն անսահման է: Իսկ սփիւռքեան պայմաններում ապրող Հայ մայրն իր զաւակի նկատմամբ ունի այլ պարտականութիւններ, ինչպիսիք են՝ զաւակի հայեցի դաստիարակութեամբ զբաղւելը եւ նրան ձուլման վտանգից պահպանելը»:



Սկզբում բացման խօսքով հանդէս եկաւ Միութեան Վարչութեան նախագահ Արմինէ Սիմոնեանը:

Արմինէ Սիմոնեանն իր խօսքի աւարտին հրաւիրեց արժն. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկերեանին՝ օրայ առթիւ արտայայտւելու:

Քահանայ հայրն իր խօսքն սկսեց կնոջ արարման կարեւորութեանն անդրադառնալով: Այնուհետեւ գնահատելով աշխարհում առաջին կին դեսպան Դիանա Աբգարի վարած կեանքը եւ ծաւալած գործունէութիւնը եւ յիշատակելով մի շարք յաջողակ կանանց անուններ անդրադարձաւ հայ մօր առաքելութեանը, որպէս ամուսնու կողակից, մայր եւ ներքին ու գոհողութեան խորհրդանիշ: Ահա մէջբերումներ օրայ բանախօսի ելոյթից. «Հայ մայրը գեղեցիկ ու կատարեալ է, երբ իր զաւակին սիրում եւ փայփայում է հայրենի ու քրիստոնէական սիրով, գուրգու-

րանքով եւ սկզբունքներով: Հայ մայրն է պահել մեր կրօնը, մեր մշակույթն ու հայրենքի նկատմամբ ունեցած մեր սէրը եւ նրա շնորհիւ է իրականացել մեր յաղթանակները: Հայ մայրն ուզեց, որ իր գաւազանը հասակ առնի հայրենի ոգիով եւ քրիստոնէական վեհ ու բարձր սկզբունքներով, որպէսզի ապագայում ծառայի իր ազգին»:



Քահանայ հայրն իր խօսքի շարունակութեան մէջ անդրադառնալով մեր ներկայ կեանքին, նշեց մեզ սպառնացող մարտահրաւէրները եւ ասաց. «Հայ մօր պարտականութիւնն այսօր առաւել եւս ծանրացել է իր տան, ամուսնու եւ գաւազանի նկատմամբ: Հայ մայրը պէտք է արթուն եւ զգօն լինի իր գաւազանի հասակ առնելու ընթացքում: Նա զգուշ պէտք է լինի իր գաւազանի կենցաղի ու բոլոր վարքերի նկատմամբ»: Բանախօսն իր արտայայտութիւնների ասարտին նշելով, որոշ ծնողների կողմից ցուցաբերուող չափազանցած զոհողութիւնների վտանգները, պատասխանատու երիտասարդներ դաստիարակելու եւ նրանց անձը լաւապէս ճանաչելու ուղղութեամբ մի շարք խորհուրդներ տւեց ներկաներին:

Այնուհետեւ ծրագրի գեղարեստական բաժնում իրականացւեցին երկու հայրենասիրական երգեր՝ «Կոմիտաս» պատանեական երգչախմբի երգիչների միջոցով, ղեկավարութեամբ խմբավար Արմէն Ամիրխանեանի: Նախ մենակատարմամբ հանդէս եկաւ տաղանդաւոր պատանի Արման Յովսէփեանը, որից յետոյ զուգերգով ելոյթ ունեցան քաղցրաձայն երգ-

չուհիներ Վանա Ծիրանեանն ու Թանիա Միանեսանը:



Գեղարեստական բաժնին յաջորդեց ընդունելութիւնը եւ ներկաներն այդ ընթացքում մտերմիկ մթնոլորտի ներքոյ արտայայտւեցին ու մօրը ձօնած երգելով ու բանաստեղծութիւններով հանդէս եկան:



Վերջում կազմակերպիչ յանձնախմբի պատրաստած նւերները՝ ձեռամբ արժն. Տ. Վազգէն քննչ. Քէօշկէրեանի շնորհւեցին ծերանոցի բնակիչներին:



ՀԱՅ ՌԻՍ. ՉՀԱՐՄԱՀԱԼ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԶՈՒՂ ԱՅԻ ՄԱՄՆԱԾԻՒՂԸ ՆՇԵՅ ՄԱՅՐԵՐԻ ՏՕՆԸ

Նախաձեռնությամբ Հայ Ուս. Զհարմահալ Միութեան Նոր Զուղայի Մասնաճիւղի Վարչութեան, հինգշաբթի՝ 19 ապրիլ 2012 թականի երեկոյեան ժամը 6:30-ին, նոյն Միութեան յարկի ներքոյ, կազմակերպել էր մայրերի մեծարման երեկոյ, ներկայությամբ միութենականների եւ մի շարք հրաւիրեալների:



Ծրագրի սկզբում, ողջուցի խօսքով հանդէս եկաւ օրւայ հանդիսավար Կարէն Խանկարեանը, որը շնորհաւորելով Մայրերի Տօնի կապակցությամբ, հրաւիրեց Հայ Ուս. Զհարմահալ Միութեան Մասնաճիւղի Վարչութեան նախագահ Յոլակ Յարութիւնեանին օրւայ առթիւ արտայայտելու:

Պրն. Յարութիւնեանն իր խօսքում նշեց, որ նկատի առնելով հայ մօր մեծ արժէքը, Վարչութիւնս որոշեց մի միջոցառմամբ մեծարել եւ արժէքաւորել զոհողութեան խորհրդանիշ՝ հայ մայրերին: Այնուհետեւ նա անդրադառնալով տարիներ առաջ առկայ դժուարին պայմաններին, կարեւորությամբ նշեց հայ մօր դերը եւ ներկայութիւնը, որպէս ընտանիքի հիմնասիւն: Յոլակ Յարութիւնեանն իր խօսքն աւարտեց հետաքրքիր պատմածքով, որը մէջբերում եւնք. «*Հայը դարերի ընթացքում դիմակայել է բազմաթիւ դժուարութիւններ, սակայն ի վերջոյ մի օր գանգատով է դիմում Աստծուն, թէ ինչո՞ւ է իր ճակատագիրն այսպէս: Աստուած հետաքրքրելով հրեշտակներից յայտնում է՝ դուք հայերդ ունէք այնպիսի մի բան, որ միւս ազգերը չունեն եւ եթէ ցանկանում էք դա կառնեմ ձեզանից ու փոխարէնը ձեզ լաւ բախտի կարժանացնեմ: Երբ հայը հետաքրքրւում է, թէ Աստուած ինչին է ակնարկում, շատ է զարմանում, քանի որ խօսքը հայ մայրերի մասին էր՝ իսկական մայրերի»:*

Ծրագրի մի այլ բաժնում հրաւիրեց օրւայ բանա-

խօս Թաթուլ Օհանեանը, այս գեղեցիկ տօնի կապակցությամբ արտայայտելու: Նա նախ բացատրեց մայր բառի իմաստը, ապա ընթերցեց իր թարգմանութիւններից՝ Իռաշ Միոզայի մօրը ձօնած բանաստեղծութիւններից մէկի հայերէնի վերածած տարբերակը:



Այնուհետեւ պրն. Օհանեանն իր խօսքի մի այլ բաժնում անլացրեց, որ մօրը մեծարելով եւ արժէքաւորելով, մենք մեր արժէքները կոչել եւնք մայր անունով, ինչպէս՝ մայր երկիր, մայրենի լեզու, մայրապետ, մայր Արաքս եւ այլն: Բանախօսը նշելով նաեւ, որ Հայ մօր դերն անլին է քան միւս ազգերի մայրերինը, անլացրեց. «*Առաւել ծանր է սփիւռքիւն պայմաններում ապրող հայ մօր պարտականութիւնը, քանի որ գաւակին մեծացնելուց ու դաստիարակելուց բացի, նա պիտի նրան սովորեցնի հայ լեզուն եւ հայի վարք ու կեցւածք»:* Վերջում նա կարեւորությամբ ընդգծեց, որ զանազանում եւն նաեւ դաստիարակման ձեւերը տարբեր ազգերում եւ մեր ազգի մէջ կարեւորում է երկու հիմք՝ նախ մեծին յարգելը, ապա՝ փոքրին խնամելը:



Բանախօսութիւնից յետոյ, գեղեցիկ երգերով ելոյթ ունեցաւ Միութեան «Մեղեդի» մանկական երգչախումբը՝ ղեկավարությամբ Մեղեդի Քալանթար Օհանեանի, որը աշխուժութիւն պարգեւեց ներկաներին: Երգեհոնի մօտ երգչախումբին ընկերակցում էր Արին Խաչիկեանը:

Ծրագիրն իր աւարտին հասաւ Շիրազի «Անբաւելի մեղքը» բանաստեղծությամբ, որը ասմունքեց հանդիսավար Կարէն Խանկարեանը:

Վերջում տեղի ունեցաւ ընդունելութիւն:

ՆՈՐԱՄՈՒՏ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՐԵԿՈՅ Ն.Զ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻԱՌՈՐԻ ՆԱԽԱՉԵՆՆՈՒԹԵԱՄԲ



Բարձրագույն ուսումնական հաստատություններում մուտք գործած նորամուտ ուսանողների յաջողութիւնը գնահատելու եւ արժեւորելու նպատակով, Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Ուսանողական Միաւորի Վարչութեան նախաձեռնութեամբ եւ կազմակերպութեամբ Վարչութեան կողմից նշանակած Գործադիր Յանձնախմբի, թականիս ապրիլի 15-ի երեկոյան հանդիպում տեղի ունեցաւ 2011-2012 ուսումնական տարեշրջանի նորամուտ ուսանողների հետ: Հնդիպմանը ներկայ էին Միութեան Կենտրոնական Վարչութեան նախագահ Վարուժ Մինասեանը, Կենտ. Վարչութեան միաւորի կապ Նորիկ Պօղոսեանը, Միաւորի Վարչութեան կազմը, անդամ-ուիիները եւ նորամուտ ուսանողներ: Որպէս բացում, ողջոյնի եւ շնորհաւորանքի խօսքով ելոյթ ունեցաւ Թաւին Մովսիսեանը, որը անդրադառնալով հանդիպման նպատակներին, առաջարկեց Միաւորի աջակցութիւնը եւ ցանկութեան դէպքում նրանց մասնակցութիւնը Միաւորի աշխատանքներին, որից յետոյ ելոյթ ունեցաւ միաւորի Վարչութեան նախագահ՝ Նարբէյ



Դալթեանը, այնուհետեւ ընթերցեց Միաւորի երկամեայ գործնութեան զեկոյցը եւ ցուցադրեց պատկերներ Միաւորի աշխատանքներից:

Ծրագրի յաջորդ բաժնում, որպէս օրինակելի ուսանողուի հրաւիրեց եւ իր յաջողութեան գաղտնիքներն ու փորձառութիւնները փոխանցեց Արինէ Թորոսեանը: Արինէն այն յաջողակ ուսանողներից է, որ 2009 թականին աւարտելով Սպահանի Պետական Համալսարանի առեւտրական վարչագիտութեան ճիւղը, զբաղեցրել է առաջին տեղը եւ առանց մուտքի քննութեան ուսումը շարունակել է գերլիսանսի մակարդակում ֆինանսական վարչագիտութեան ճիւղում, իսկ 2012 թականին աւարտել է Սպահանի Պետական Համալսարանում նախադէպը չունեցող ամենաբարձր՝ 19.85 միջինով:



Ձեռնարկի աւարտին հրաւիրեցին եւ շնորհաւորանքի խօսքերով ելոյթ ունեցան Կենտրոնական Վարչութեան նախագահ Վարուժ Մինասեանը եւ Միաւորի կապ Նորիկ Պօղոսեանը, որին յաջորդեց նորամուտ ուսանողների համար նախատեսւած գնահատագրերի շնորհումը: Ըստ ընթերցւած զեկոյցի, Միաւորն այժմ ունի շուրջ 90-անդամ-ուիիներ:

Երեկոն աւարտեց միասնական լուսանկարելով եւ համեստ հիւրասիրութեամբ:

Ն.Ձ. ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱԳԱՐՏԷՉ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԸ ՏՕՆԵՑ ՄԱՅՐԵՐԻ ՏՕՆԸ

Սրբութեան եւ նկրումի խորհրդանիշ հայ մօրը մեծարելու նպատակով, նախաձեռնութեամբ Ն.Ձ. Հայոց Ազգային Մանկապարտէզ-Նախակրթարանի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ Ծնողական Խորհրդի, չորեքշաբթի՝ ապրիլի 11-ի երեկոյեան, Կրթահամալիրի «Ալեմուշ Տէրեան» սրահում, ջերմութեամբ ու մեծ սիրով յագեցած միջոցառմամբ նշեց Ս. Աստուածածնի Աւետման Տօնը՝ Մայրութեան եւ Գեղեցկութեան Օրը, որտեղ սաների մայրերից բացի, ներկայ էին նաեւ նրանց մեծմայրերը:



Սկզբում բացման եւ ողջոյնի խօսքով հանդէս եկաւ դպրոցի ուսուցչուհի Անետ Ղազարեանը: Նրա բացման խօսքում ասուած էր. «Մայրը, որպէս բնութեան անբեկանելի մասնիկը, որպէս նրա արարչագործութեան իւրօրինակ ժառանգորդն ու շարունակողը, ամէն վայրկեան արժանի է հիացմունքի եւ յարգանքի: Մայրական սէրն այնպէս գեղեցիկ է ու լուսաւոր, ինչպէս գարնան դալար շունչը, ինչպէս հրաշագործ աղբիւրը, որը ընդունակ է սրբագործելու եւ մաքրագործելու ամէն բան: Եւ յատկապէս մօր անկաշկանդ սէրը, անսահման բարութիւնը, համբերութիւնը, հոգատարութիւնը եւ գոհողութիւնը միշտ էլ հանդիսացել է ոգեւորութեան առանցք եւ ոգեկոչման բարձրակէտ»:



Բացման խօսքից յետոյ, իրագործեց միջոցառման գեղարեստական բաժինը՝ դպրոցի ուսուցչական կազմի ժրաշան աշխատանքի եւ սաների հիասքանչ կատարումների շնորհիւ: Մանկապարտէզի եւ Նախակրթարանի աշակերտները մայրերին, տատիկներին եւ բնութեան զարթօնքին նկրած երգերով առաւել բարձրացրին ներկայների տօնական տրամադրութիւնը: Գեղարեստական բաժնում խմբական ասմունքով հանդէս եկան նախ Մանկապարտէզի Մանիշակա-

գոյն, ապա՝ Դեղին խմբակների սաները, իսկ մայրերին ուղղւած մեծաբանքի ջերմ խօսքերով առանձնաբար ելոյթ ունեցան Նախակրթարանի բոլոր աշակերտները, որոնցով մայրերն իրենց լիովին գնահատուած զգացին:



Ծրագրի երկրորդ բաժնում, բուն թեման արտայայտելու համար, բեմ հրաւիրեց օրւայ բանախօս հոգ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը: Նա ջերմ ու գեղեցիկ խօսքեր ուղղելով մայրերին, ասաց. «*Երբ մայր ենք ասում, այնտեղ զգում ենք ջերմութիւն եւ քաղցրութիւն: Երբ մայր ենք ասում, զգում ենք կեանքի իմաստը, մօր տառապանքն ու ցաւը եւ նրա գուրգուրանքի քաղցրութիւնը*»:



Այնուհետեւ հոգ. Հայր Սուրբն իր խօսքի շարունակութեան մէջ նշելով, որ հայ մայրը Աստուածամօրը նմանեցնելով, տարբերում է միւս մայրե-

Շարունակութիւն՝ 33-րդ էջում

**Ն.Ջ. ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ «ՆԱՐԵԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ ՍԱՆԵՐԻ ԱՅՑՈՒ
«ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ**



Նոր Զուղայի Հայոց Ազգային «Նարեկ» Մանկապարտեզի տեսչությունը եւ ուսուցչական կազմը կարեորելով գրադարանից օգուելու եւ սաներին հենց փոքր տարիքից ծանօթացնելու գրադարանին ու նրանից օգուելու պայմաններին, գեղեցիկ ու գնահատելի մի նախաձեռնություն մեկնաձեռք կարգով այցելություն են կազմակերպում Միութեան «Նալբանդեան» գրադարանը, այնուհետեւ իրենց դասարանային պարապմունքները կազմակերպում են Միութեան յարկի տակ: Այս անգամ Դեղին խմբակի աշխատանքն առնչում էր գրքին ու գրադարանին, որի առիթով էլ երեքշաբթի՝ մարտի 13-ին կազմակերպել էր սոյն նախաձեռնությունը: Մինչ միւս երեք խմբերն իրենց աշխատանքը կատարում էին Միութեան տարբեր բաժանմունքներում, Դեղին

խմբակն իր դասարակչուհիների՝ Սկարլետ Հայրապետեանի եւ Մարգարիտ Մինասքանեան ուղեկցությամբ մուտք գործեց գրադարան: Տկն. Հայրապետեանը դաստիարակի յատուկ ոճով ու մանուկներին հասկանալի ձեւով բացատրեց գրադարանի ու գրքերի բաժանումների մասին եւ առնչակից այլ մանրամասն տեղեկություններ փոխանցեց նրանց: Նա հարց ու պատասխանի ձեւով երեխաների ուշադրությունը կենտրոնացրեց գրքերից օգուելու եւ յատկապէս անվճար վերադարձնելու կարեւոր հանգամանքին: Սոյն նախաձեռնութեան արդիւնաւետութիւնը նկատելիորէն արձագանքում է նրանով, որը երեխաների մօտ մեծ հետաքրքրութիւն է առաջացնում դէպի գրադարանը եւ նրանից օգուելու երեխաների թիւը աճում է:



Շարունակութիւն՝ նախորդ էջից

Ն.Ջ. ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԸ...

րից, աւելացրեց. «Հայ մօր առաքելութիւնը տարբեր է, որովհետեւ հայ մայրը նախ դպրոց է՝ իր երեխայի համար: Հայ մայրերի շնորհիւ է, որ մենք այսօր հայ ենք մնացել եւ եկեղեցի ենք պահում: 1915 թւականին, երբ հայերը հալածուած էին թուրքերի միջոցով, հայ մայրն իր զաւակի համար դարձաւ դպրոց եւ աշուրները նրան սովորեցրեց անապատի աւազների վրայ: Երբ եկեղեցիներ չկային, հայ մայրն իր զաւակին աղօթել սովորեցրեց: Եւ սա է հայ մօր առաքելութիւնը»: Օրւայ բանախօսը մայր լինելն աստուածային պարգէւ համարելով, մօր անշահախնդիր սիրոյ եւ գուրգուրանքի մասին պատմեց մի իրական եւ յուզիչ դէպք, որով միեւնոյն ժամանակ կոչ ուղղեց՝ ըստ արժանուոյն յարգել ու գնահատել մայրերին: Նա իր խօսքի աւարտին խոնարհելով բոլոր մայրերի առջեւ՝ աղօթեց առ Աստուած իւրաքանչիւր մօր առողջութեան, երջանկութեան եւ բարօրութեան համար:

Հանդիսութիւնն աւարտեց դպրոցի Ծնողական Խորհրդի կողմից կազմակերպուած ընդունելութեամբ:

ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ ՄՐՅՈՅԹ

մասնակցությամբ «Քանանեան» դպրոցի ուղեցույց օղակի աշակերտուհիների՝ նիւրած Հայոց Յեղասպանութեան 97-րդ փարելիցին

Նախաձեռնությամբ Նոր Զուղայի Հայոց Ազգային «Քանանեան» աղջ. ուղեցույց եւ միջնակարգ դպրոցի տեսչութեան եւ հայերէն առարկաներ դասաւանդող ուսուցիչների, հինգշաբթի՝ 19 ապրիլի երեկոյեան, Նոր Զուղայի Հայոց Ազգային Կրթահամալիրի «Ալեհուշ Տէրեան» սրահում տեղի ունեցաւ Հայոց Յեղասպանութեանը նիւրած ամենամեայ ճարտասանութեան մրցոյթը՝ ուղեցույց օղակի աշակերտուհիների միջեւ:

«Քանանեան» դպրոցը առաջնորդում է «Խօսքն է պահում համայնքները» կարգախօսով, աւելացրեց. «Որպէս հայկական դպրոցի պատասխանատուներ, մեզ համար կարեւոր նշանակութիւն ունի Մերոպ Մաշտոցի աւանդի պահպանումը: Մերոպ Մաշտոցը ստեղծել է այնպիսի գէշք, որը դարբերի ընթացքում ոչ միայն չի ոչնչացել, այլեւ յաղթական դուրս գալով բազմաթիւ մարտերից՝ մեզ է հասել, իսկ մեր պարտականութիւնն է պահել, պահպանել ու զարգացնել մեզ հասած այս սրբազան աւանդը»: Ռիմա Սիմոնեանն իր խօսքի շարունակութեան մէջ դիմելով մասնակիցներին՝ ասաց. «Դուք բոլորդ յաղթողներ էք, քանի որ լեզւի պահպանման եւ զարգացման ուղղութեամբ էք քայլ վերցրել: Սփիւռքեան պայմաններում հայոց լեզւի պահպանումը հերոսութիւն է, եւ դուք սիրելի աշակերտներ, հայոց լեզւի զինւորներն էք, որ հերոսաբար կատարում էք ձեր առաքելութիւնը»: Այնուհետեւ դպրոցի փոխտեսչուհին ներկաներին բացատրեց սույն մրցոյթին պատրաստելու համար դպրոցի պատասխանատուների եւ մասնակից աշակերտուհիների կողմից կատարուած նախապատրաստական աշխատանքները, որից յետոյ ներկայացրեց իրաւարար կազմի անդամներին:



Սույն մրցոյթին որպէս ունկնդրողներ ներկայ էին՝ Կրթական Խորհրդի ներկայացուցիչ Սաթենիկ Աւետումեանը, Հայոց Յեղասպանութեան 97-րդ տարելիցի ոգեկոչման Նոր Զուղայի յանձնախմբի եւ հայոց ազգային դպրոցների ուսուցիչների ներկայացուցիչները, մասնակիցների ծնողներն ու հարազատները եւ «Քանանեան» դպրոցի աշակերտուհիները:



Նախ բացման խօսքով ելոյթ ունեցաւ դպրոցի փոխտեսչուհի Ռիմա Սիմոնեանը: Նա ողջոյնի եւ բարիգալստեան արտայայտութիւններից յետոյ, նշելով, որ



ճարտասանութեան մրցոյթի իրաւարարական կազմում ընդգրկուած էին «Քանանեան» աղջ. դպրոցի փոխտեսչուհի Ռիմա Սիմոնեանը, «Կատարի-նեան» տղայոց դպրոցի փոխտեսուչ Արթին Մուրադեանը, ուսուցչուհիներ Անահիտ Թահմազեանն ու

Սեդա Դիլանչեանը եւ Հայոց Ցեղասպանութեան 97-րդ տարելիցի ոգեկոչման Նոր Զուղայի յանձնախմբի անդամ, բանաստեղծուհի Հերմինէ Բաբայեանը: Նախքան մրցոյթի սկսելը, իրաւարար կազմի անդամ, ուսուցչուհի Սեդա Դիլանչեանը յայտնեց, որ կատարումների գնահատման համար նկատի են առնելու նիւթի բովանդակութիւնը եւ ընկալումը, լեզուի արտայայտչութիւնն ու նիւթի մատուցման ձեւը:

Յատկանշական է, որ իւրաքանչիւր դասարանի ելոյթից առաջ աշակերտների հերթականութիւնը ճշտում էր վիճակահանութեամբ:



Դպրոցի ուղեցոյց օղակի առաջին, երկրորդ եւ երրորդ դասարաններից սոյն մրցոյթին մասնակցել էին թուով 16 աշակերտուհիներ, որոնցից իւրաքանչիւրը նախ ելոյթ ունեցաւ իր նախընտրած եւ նախապէս պատրաստած թեմայի շուրջ, ապա վիճակահանութեամբ ընտրելով իրաւարար կազմի նախատեսած թեմաներից մէկը անպատարստից արտայայտեց երկրորդ նիւթի կապակցութեամբ: Ուշագրաւ էին աշակերտների կողմից ընտրւած հայրենասիրական թեմաները, որոնք ինքնին ապացուցում էին մեր նոր սերնդի մէջ ձեւաւորւած եւ ամրապնդւած հայրենասիրական կուռ ոգին:

Մրցութային բաժնի աւարտին իրաւարարներն իրենց գոհունակութիւնը յայտնելով աշակերտուհիների պատրաստածութեան, թեմաների, կատարած աշխատանքների եւ ելոյթների կապակցութեամբ, զբաղւեցին կատարումների գնահատման եւ արդիւնքների ամփոփմամբ աշխատանքով: Իսկ այդ ընթացքում, մինչեւ պարգեւատրման արարողութեան սկսելը, ներկաները հիւրասիրեցին Կրթահամալիրի միւս սրահում եւ մտերմիկ զրոյցներով իրենց ուրախութիւնն ու հրճանքը յայտնեցին միմեանց՝ մրցոյթի կազմակերպման եւ աշակերտների ելոյթների կապակցութեամբ:

Ընդունելութիւնից յետոյ տեղի ունեցաւ պարգեւատրման արարողութիւնը եւ բոլոր մասնակիցները Կրթական Խորհրդի անդամ Սաթենիկ Աւետումեանի, ոգեկոչման յանձնախմբի անդամ Սիրան Ալումեանի եւ իրաւարար կազմի անդամներ՝ Հերմինէ Բաբայեանի ու Արթին Մուրադեանի միջոցով ստացան ոգեկոչման յանձնախմբի կողմից պատրաստւած գնահատագրերը եւ փոքրիկ յուշանւէրներ՝ մասնակցութեան համար: Իսկ յատուկ մրցանակներ շնորհեցին լաւագոյն ելոյթներ ունեցող անհատներին: Արհեստավարժ իրաւարարների կողմից ամփոփւած արդիւնքները հետեւեալն էին.



Գերազանց՝

- Շաղիկ Մատթէոսեան (Երրորդ դասարան)
- Նազէ Ասատրեան (Երրորդ դասարան)
- Նարէ Վարդանեան (Երրորդ դասարան)
- Լիլիան Ասատրեան (Երկրորդ դասարան)
- Արփա Մարգարեան (Երկրորդ դասարան)

Լաւագոյն՝

- Սերլի Շահբազեան (Առաջին դասարան)
- Լիլիան Յակոբեան (Առաջին դասարան)
- Նազելի Ղարիբեան (Առաջին դասարան)

Ծառ լաւ՝

- Մեղրի Կարապետեան (Երրորդ դասարան)
- Վանէ Յարութիւնեան (Երկրորդ դասարան)
- Փիւնիկ Ասատրեան (Երկրորդ դասարան)
- Անի Աբգարեան (Երկրորդ դասարան)

Լաւ՝

Աւենիա Ծատուրեան (Երկրորդ դասարան)
 «Զանանեան» դպրոցի աշակերտուհիների տպաւորիչ ելոյթներով պատշաճօրէն ոգեկոչւեց Ապրիլեան Մեծ Եղեռնի 97-րդ տարելիցը, ապացուցելով որ տարիների անցումը ոչ միայն չի մոռացրել կատարւածը, այլեւ դաստիարակել է այնպիսի սերունդներ, որոնք իրենց խորիստ ձայնն են միացնում համայն հայութեան պահանջատիրական ձայնին:

«ԹԱԴԵՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ» ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՉԵՌՆՈՒԹԵԱՄԲ ԳԵՂԱՐԻԵՍԱԿԱՆ ՉԵՌՆԱՐԿ՝

նւիրաձ հայ ժողովրդի արդարադատ բազուկ Սողոմոն Թեհլիրեանի միջոցով իրագործւած «Նեմեսիս» գործողութեանը

Նախաձեռնութեամբ Հ.Յ.Դ. «Թադէոս Թադէոսեան» Պատանեկան Միութեան, ուրբաթ՝ մարտի 16-ի երեկոյեան, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան սրահում տեղի ունեցաւ ձեռնարկ նւիրաձ՝ Սողոմոն Թեհլիրեանի կատարած «Նեմեսիս» գործողութեանը՝ ոճրագործ եւ ցեղասպան Թալէաթին մահապատժի ենթարկելու կապակցութեամբ:

Որքան յետոյ ներկաները հրաւիրեցին դիտելու հայ վրիժառուի ակտին ու դատաւարութեանն անդրադարձող վաւերագրական տեսաւերլուծ:



Ձեռնարկին ներկայ էին՝ Ծահինջահրի հայ համայնքի հոգեւոր հովիւ հոգ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, Իսլ. Խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը, շրջանի Հայ Դատի Յանձնախմբի եւ ազգային մարմինների ներկայացուցիչները, հոձ թուլ ժողովուրդ ու պատանիներ:



Որպէս օրայ բանախօս, Միութեան անդամուհի Մելրի Ղուկասեանը նախ կարեւորութեամբ ընդգծեց Հայոց Ցեղասպանութեան իրողութեան փաստերն ու «Ցեղասպանութիւն» տերմինի ստեղծման երեւոյթը: Այնուհետեւ նշելով, որ իրատւոյթները չեն տրուում ժողովրդին, այլ ձեռք են բերուում պաշարելով, նա իր խօսքի շարունակութեան մէջ անդրադարձաւ նաեւ Սողոմոն Թեհլիրեանի միջոցով իրականացւած ակտին, մատնանշելով 1920-22 թւականների ժամանակահատուածում հայ վրիժառու երիտասարդների միջոցով իրագործւած «Նեմեսիս» գործողութիւնները:



Ծրագիրը բացւած յայտարարեց «Գինի լից» երգի տեսահոլովակի ցուցադրմամբ, այնուհետեւ Պատանեկան Միութեան անդամուհի Վեհանուշ Խուրաբախշեանի միջոցով ընթերցեց Սողոմոն Թեհլիրեանի



Ծրագրի գեղարւեստական բաժնում ներկաները

Ծարունակութիւն՝ 37-րդ էջում

ԱՊՐԻԼԵԱՆ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 97-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Ապրիլ ամիսը հայ ժողովրդի համար ունի իրաչափ-տուկ նշանակություն: Դա մեր Բիւրարւոր Նահատակների թափած արիւնն է եւ իրենց հանգիստը չգտած մէկ ու կէս միլիոն զոհերի արդարութիւն եւ հատուցում աղաղակող ձայնը: Ինչպէս 97 տարիներ, այս տարի եւս մեր ձայնը միացնելով նահատակների ձայնին ի լուր համայն աշխարհին բարձրացրեցինք մեր բուռնցքները պահանջելով արդարութիւն եւ հատուցում: Ծահիճահիւրում իրականացւեցին մի շարք միջոցառումներ Ապրիլեան Եղեռնի 97-ամեակի ոգեկոչման յանձնախմբի միջոցով: Յանձնախումբը բաղկացած էր հետեւեալ անհատներից.-

Մատիթա Քեշիշեան՝ ատենապետ, Ալէն Մանուկեան՝ փոխ-ատենապետ, Անահիտ Այազեան՝ քարտուղար, Անիթա Խաչատրեան՝ գանձապահ, Նինարէ Թահմազեան՝ հաշւապահ, Անահիտ Օհանեան, Եղիշ Աղախանեան, Քարմէն Ծահիջանեան, Հիլդա Քեշիշեան, Սիլա Թորոսեան եւ Գեղարդ Թահմազեան՝ խորհրդատու անդամ, Գուրգէն Մանուկեան եւ Վարդուհի Պօղոսեան՝ Վաշութեան կապ:

Ուրբաթ՝ ապրիլի 20 Երիտասարդական կլոր սեղան

Ապրիլի 20-ին «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում Ծահիճահիւրի հոգետր հովի հոգշ. Տ. Անանիա Վրդ. Գունանեանի գլխավորութեամբ տեղի ունեցաւ երիտասարդական կլոր սեղան:



Կլոր սեղանը վարում էր տկն. Վիոլետ Յարութիւնեանը: Ծրագրի սկզբում ներկաները մէկ րոպէ լուր-թեամբ յտնկալա յարգեցին Բիւրարւոր Նահատակների յիշատակը: Այնուհետեւ Հայր Սուրբը փոխանցեց օրւայ խօսքը, ասելով. «Առաջին հերթին գնահատում եմ Ապրիլեան Մեծ Եղեռնի 97-ամեակի ոգեկոչման յանձնախմբին իր տեսակի մէջ գեղեցիկ այս միջոցառման համար եւ ուրախ եմ, որ բոլորդ այսօր

ներկայ էք եւ նորոգում էք ձեր ուխտը եւ երկարացնում էք ձեր ձեռքը նահատակներին, որոնց տառապանքը կարող է հասկանալ այն անձը, որ իսկապէս իր հոգու եւ սրտի մի անկիւնում դրոշմել է Ապրիլ 24-ը, այլապէս ոչ մի արժէք չի ունենայ, եթէ այն յիշւի տարւայ միայն մէկ օրը: Այսօր ինչ է նշանակում Ապրիլ 24-ը հայ երիտասարդների կեանքում. ա) կապւել իր լեզւին եւ մշակոյթին, բ) հաւատարմութիւն մեր եկեղեցուն եւ կրօնին, գ) անխտրականութիւն: Այսինքն այստեղ բոլորս հաւատար ենք եւ իրաւունք ունենք հաւասարապէս կարծիք յայտնելու»:

Հայոց Եղեռնը համաշխարհային ճանաչման հասցնելու միջոցների եւ տարբերակների մասին խօսեցին նաեւ Զանիկ Թահմազեանը եւ Արմոնդ Հախնազարեանը: Այնուհետեւ իրենց կարծիքները եւ տեսակէտներն արծարծւած թեմաների շուրջ յայտնեցին նաեւ ներկայ երիտասարդ-ուհիները:

Շաբաթ՝ ապրիլի 21 Նկարչութեան եւ գրքի ցուցահանդէս

Շաբաթ՝ ապրիլի 21-ի ժամը 19:00-ին «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում հոգշ. Տ. Անանիա Վրդ. Գունանեանի հայրական օրհնութեամբ բացւեց նկարչութեան եւ գրքի ցուցահանդէսը: Սրահի պատերը մինչեւ առաստաղ լի էին Ապրիլեան Եղեռնը պատկերող նկարչութիւններով եւ տարբեր աշխատանքներով, որոնք կատարել էին «Նարեկ» Մանկապարտէզ-Նախակրթարանի սաները, «Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցների տարրական եւ ուղեցոյց դպրոցների աշակերտ-ուհիները, ինչպէս նաեւ տարբեր տարիքային խմբերի շատ անհատներ: Բոլոր աշխատանքներում կար անցեալի ցաւն ու մեր նահատակների տառապանքը, ինչպէս նաեւ հայ ժողովրդի պայծառ ապագայի յոյսն ու լոյսը:



Ցուցահանդէսում ներկայացւած էին նաեւ յանձնախմբի կողմից նախապէս յայտարարւած կնիք-խոր-

հրդեհանիշ մրցութեան մասնակիցների աշխատանքները: Յատկանշելի է, որ այս տարի եւս մրցութեան յաղթող էր ճանաչել Արին Պետրոսեանը: Ցուցահանդէսում իրենց յատուկ տեղն էին գտել հայերէն եւ պարսկերէն լեզուներով Մեծ Եղեռնի վերաբերեալ գրքերը, ինչպէս նաեւ մանկական գրականութիւն:



Ցուցահանդէսը մարդաշատ էր եւ այցելում էին մինչեւ ուշ երեկոյ: Յանձնախումբը պատրաստել էր նաեւ մի յուշամատեան, որտեղ առաջինն իր մտքերը արտայայտեց հոգշ. Ս. Անանիա վրդ. Գունանեանը:

**Կիրակի՝ ապրիլի 22
Գիտելիքների մրցույթ**

Կիրակի՝ ապրիլի 22-ին «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում տեղի ունեցաւ գիտելիքների մրցույթ: Մրցութիւն իրենց գործօն մասնակցութիւնն էին բերել դպրոցի ինչպէս ուղեցուց, այնպէս էլ տարրական օղակի աշակերտ-ուհիները: Ծրագրին ներկայ էին հոգշ. Ս. Անանիա վրդ. Գունանեանը, Համայնքային Վարչութեան ներկայացուցիչները եւ աշակերտների ծնողները: Բոլորն անհամբեր եւ խանդավառութեամբ սպասում էին մրցութի բացմանը: Ծրագիրը բացեց յանձնախմբի նախագահ Մատիթա Քեշիշեանը, որը յանձնախմբի անունից ողջունեց ներկաներին, մաղթելով մասնակիցներին արդար մրցակցութիւն:



Օրայ մրցութի իրաւարար կազմի անդամներն էին Անահիտ Այազեանը, Վարդուհի Պողոսեանը եւ Մատիթա Քեշիշեանը: Օրայ աւիթով իր խօսքը փոխանցեց հոգշ. Ս.

Անանիա վրդ. Գունանեանը, որը գնահատելով իրաքանչիւր աշակերտ-ուհու մասնակցութիւնը, նշեց որ մրցութի նպատակն է լաւապէս ծանօթացնել հայ աշակերտին իր պատմութեանն ու մշակութիւն:



Սույն մրցութեանը մասնակցում էին 6 խմբեր՝ 4-5 անդամներով: Խմբերն էին՝ Արմենիա, Արաքս, Վան, Սեւան, Մասիս, Ապրիլ:



Մրցութիւն սկսեց թե՛ պայքարով եւ անցաւ աշխոյժ եւ խանդավառ մթնոլորտում, իսկ արդիւնքում իրաւարար կազմի որոշմամբ Արմենիա, Սեւան եւ Մասիս խմբերը հաւասարապէս ճանաչւեցին յաղթողներ:

Երկուշաբթի՝ ապրիլի 23



Երկուշաբթի՝ ապրիլի 23-ի յետկէսօրեայ ժամը

18:00-ին համայնքի հոգևոր հովի հոգ՝ Տ. Անանիա վրդ. Գունանեանի եւ արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանի ձեռնամբ Ապրիլեան Զոհերի յիշատակի Ծահինջահրի Խաչքարի մօտ կատարեց Հսկումի եւ Հոգեհանգստեան արարողութիւն: Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Ծահինջահրի Մասնաճիւղի Սկաւտական Միաւորի սկաւտների միջոցով տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն, իսկ ջահակիր սկաւտները մինչեւ ուշ երեկոյ հերթափոխ խմբերով հսկեցին եւ իրենց յարգանքի տուրքը մատուցեցին Ապրիլեան Եղեռնի Խաչքարի մօտ:



Ծրագրի շարունակութեան իրենց յարգանքի տուրքը մատուցեցին եւ ծաղկեպսակներ տեղադրեցին Ծահինջահրի Հայ Համայնքի Վարչութեան, 97-րդ տարելիցի ոգեկոչման յանձնախմբի անդամները, «Արբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցների եւ «Նարեկ» Մանկապարտէզ-Նախակրթարանի աշակերտ-ուհիները, ուսուցչական կազմը եւ Ծնողական խորհուրդները, Ծահինջահրի Հայ Կանանց Եկեղեցասիրաց Միութեան, Ն.Ձ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Ծահինջահրի Մասնաճիւղի, Ծահինջահրի Գրական Եւ մշակութային «Սասուն» Միութեան, Փերիոյ Կրթասիրաց Միութեան Ծահինջահրի Մասնաճիւղի, «Թաղէոս Թաղէոսեան» Երիտասարդական Միութեան, «Նարեկ» եւ «Նարօս» երգչախմբերի անդամները:



Միջոցառման ընթացքում իրենց խօսքն արտայայտեցին յանձնախմբի, Համայնքային Վարչութեան, «Արբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցի աշակերտութեան ներկայացուցիչները, եղան խմբերգեր:

«Նարեկ» Մանկապարտէզ-Նախակրթարանի սաների եւ «Արբոց Վարդանանց» ու «Մասիս» դպրոցների աշակերտ-ուհիների կատարմամբ:

Ներկաներին իր պատգամը յղեց համայնքի հոգևոր հովի հոգ՝ Տ. Անանիա վրդ. Գունանեանը: Նա իր խօսքն սկսեց հետեւեալ տողերով.

*«Բայց մենք չընկանք մենք միշտ կանք
Դեռ չհանգանք դեռ կը գանք
Երբ տան գանգը, ահագանգը,
Որ մեր հոգու պարտքը տանք:*

Ահաւասիկ մէկ անգամ եւս այս տարի հաւաքուած Ապրիլեան Նահատակների մատուցելով օժևած այս Յուշարձանի առաջ, մեր հոգու պարտքն ենք տալիս ու մեր նահատակների արեան կանչն ենք ոգեկոչուծ այսօր: Ծահինջահրի սիրելի՛ հարազատներ, դուք մէկ անգամ եւս եկաք այստեղից ասելու ցեղասպան թուրքին, որ մենք չենք լռել եւ չենք լռելու մինչեւ այն ժամանակ, որ դու ուրանուծ ես Հայոց Յեղասպանութիւնը, մինչեւ այն ժամանակ, որ մեր նահատակների արեան գինը չես վճարել, մենք կանք, պիտի լինենք եւ պայքարենք: Խուճկ եւ աղօթք Ապրիլեան Նահատակների անթառամ յիշատակին»:



Այնուհետեւ տեղի ունեցաւ մոմավառութիւն համայնքի բոլոր ներկաների միջոցով եւ ծրագիրը շարունակեց Վարդան Պետրոսեանի «Վերելք» ներկայացման մի բաժնի տեսաֆիլմի ցուցադրումով: Նոյն գիշեր «Արբոց Վարդանանց» դպրոցի շրջափակում աւելի քան 75 երիտասարդ-ուհիներ դիմեցին բողոք նստացոյցի, որը տեւեց մինչեւ առաւօտ: Որոշ ծնողներ եւս մասնակցեցին նստացոյցին մինչեւ կէս գիշեր, այնուհետեւ խարոյկի շուրջ հաւաքուած կատարեցին ազգային-յեղափոխական երգեր: Եղան մտքերի փոխանակութիւն ազգային եւ հայ երիտասարդների հարցերի շուրջ: Յատկանշելի է նաեւ, որ նստացոյցին ներկայ էր հոգ՝ Տ. Անանիա վրդ. Գունանեանը, Համայնքային Վարչութեան ներկայացուցիչները եւ յանձնախմբի բոլոր անդամները:

**Երեքշաբթի՝ ապրիլի 24
Նամահաաք եւ բողոքի ցոյց**

Երեքշաբթի՝ ապրիլի 24-ի առաւօտեան ժամը 8:30-ին, համայնքի հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը կատարեց ակոսաւօտեան ժամերգութիւն եւ Հոգեհանգստեան արարողութիւն՝ ի յիշատակ Մեծ Եղեռնի Բիւրաւոր Նահատակների:



Այնուհետեւ «Սրբոց Վարդանանց» դպրոցի բալկոն տեղի ունեցաւ համահաաք եւ բողոքի ցոյց: Իրենց բողոքի խօսքով եւ պահանջներով ելոյթ ունեցան Համայնքային Վարչութեան ատենապետ Զանիկ Թահմազեանը, իսկ պարսկերէն լեզուով՝ Գեղարդ Թահմազեանը: Հնչեցին լոզունգներ հայերէն եւ պարսկերէն լեզուներով:



**Երկուշաբթի՝ ապրիլի 30
Պեղարեստական ծրագիր**

Երկուշաբթի՝ ապրիլի 30-ի երեկոյեան ժամը 20:00-ին տեղի ունեցաւ ձեռնարկ, որը բաղկացած էր երկու բաժնից՝ բանախօսութիւն եւ գեղարեստական ծրագիր, որին ներկայ էին Սպահանի Հայոց Թեմի բարեջան առաջնորդ գերշ. Տ. Բարբէն եպս. Զարեանը, արժն. Տ. Մեսրոպ քինյ. Գալստանեանը, արժն Տ.

Վարդան քինյ. Աղաբաբայեանը, Թեմական Խորհրդի ներկայացուցիչը եւ բազմաթիւ հայորդիներ:

Օրուայ հաղորդավարներ Մատիթա Քեշիշեանը եւ Անահիտ Այազեանը բարի գալուստ մաղթելով ներկաներին, խնդրեցին մէկ րոպէ լռութեամբ յոտնկայս յարգել Ապրիլեան Նահատակների յիշատակը, այնուհետեւ ներկայացնելով օրուայ ծրագիրը, բեմ հրաւիրեցին օրուայ բանախօսներ Վարդուհի Պողոսեանին եւ Զանիկ Թահմազեանին:



Սկզբում ելոյթ ունեցաւ տկն. Վարդուհի Պողոսեանը, որը հանգամանօրէն պատմեց Հայոց Ցեղասպանութեան դառն իրողութեան եւ այն ծրագրերի մանրամասները, որ թուրքերը կազմել էին հայերին ոչնչացնելու համար եւ շեշտեց. «Ո՛չ միայն թուրքերը չկարողացան հասնել իրենց նպատակին, այլեւ մենք այդ տառապանքներից եւ տանջանքներից կարողացանք վերածնել եւ 600 տարուց յետոյ ունենալ անկախ պետութիւն: Պէտք է շարունակենք մեր պայքարը եւ պահանջատիրութիւնը մինչեւ թուրքը եւ աշխարհը ճանաչի հայոց ցեղասպանութիւնը»:



Յաջորդաբար պրն. Զանիկ Թահմազեանը ճշգրիտ փաստերով եւ թախաններով պատմեց Ցեղասպանութեան նախնական դրոյապատճառների եւ թուրքերի մտադրութիւնների մասին, ինչպէս նաեւ այն փաստը, որ Ցեղասպանութեան կազմակերպիչներն ինչպէս դատապարտուեցին մահաւան իրենց իսկ պետութեան կողմից՝ երկու պատճառներով՝ ա) թուրքիային պատերազմի մէջ ներքաշելու բ) հայերին տեղահանելու եւ զանգաւածային սպանութիւնների հա-



մար: Նա նշեց, որ յանցագործները յաջողեցին փախչել իրենց երկրից, բայց գետին տապալեցին Սողոմոն Թեհլերեանի եւ հայ ազգի այլ երիտասարդների ձեռքով: Բանախօսն իր խօսքը շարունակելով նշեց. «Այսօր արդէն աշխարհի 24 երկրներ պետականօրէն ընդունել են Հայոց Յեղասպանութիւնը: Եւ հիմա հայ ժողովուրդը մինչեւ Յեղասպանութեան 100-ամեակը պէտք է համախմբւի իր նպատակների շուրջ՝ ա) Հայոց Յեղասպանութեան ճանաչումը հասցնել միջազգային մակարդակի, բ) պարտադրել թուրքերին ճանաչել այն եւ հատուցել ողջ պատասխանատուութեամբ»:



Ծրագրի երկրորդ բաժինը բաղկացած էր գեղեցիկ հայրենասիրական երգերից եւ ասմունքներից, որոնք կատարեցին՝ Գեղարդ Թահմազեանը, Սեւադա Իսաղուլեանը, Արին Մելքոնեանը, Անդրէ Խաչատրեանը, Էմանուէլ Քամարգարեանը, Նորվան Աղախանեանը, Նոռա Աղախանեանը, Արուսիկ Հախնազարեանը եւ Փիւնիկ Յովսէփեանը: Դպրոցի պարախումբը, Ալինա Գրիգորեանի ղեկավարու-

թեամբ, կատարեց Եղեռնին նւիրած գեղեցիկ եւ տպաւորիչ պար՝ արժանանալով ներկաների հիացմունքին եւ ծափողջոյններին: Ծրագրի աւարտին Մառիթա Քեշիշեանը շնորհակալութիւն յայտնեց համայնքային Վարչութեանը՝ մշտական օժանդակութեան, հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանին գեղարեստական ծրագրին համագործակցելու, Հարմա Կարապետեանին՝ բարձրորակ ձայն ապահովելու համար, նաեւ բոլոր այն երիտասարդ-ուհիներին, որոնք համագործակցել էին բոլոր միջոցառումներին:

Վերջում բեմ հրաւիրեց Սպահանի Հայոց Թեմի բարեջան առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը: Սրբազան Հայրն իր գնահատանքի խօսքն ուղղեց Ապրիլեան Եղեռնի 97-ամեակի Ծափնշահրի յանձնախմբի անդամներին, որոնք ապրիլ ամսւայ ընթացքում կազմակերպեցին բարձր մակարդակի միջոցառումներ: Նա գնահատեց նաեւ նոր սերնդի ներկայացուցիչներին, որոնք իրենց գեղեցիկ երգերով, ասմունքներով եւ պարով իրենց ձայնը՝ նոր սերնդի ձայնը, Ծափնշահրի երիտասարդութեան ձայնը լսելի դարձրին թուրքին եւ աշխարհին ասելով, որ մենք չենք մոռացել մեր նահատակներին եւ այսօր ես՝ 97 տարիներ յետոյ, մենք հաւատարիմ ենք մեր նահատակների կտակին եւ եկել ենք ասելու աշխարհին եւ թուրքին որ՝ «Մենք ողորմութիւն չենք խնդրում, այլ պահանջում ենք արդարութիւն»:

Աւարտեցին Մեծ Եղեռնի 97-ամեակի յանձնախմբի կազմակերպած միջոցառումների շարանը, որոնց համագործակցեցին մեծ թուով երիտասարդ-ուհիներ, իրենց լուսնան ներդրելով Ապրիլեան Եղեռնի պահանջատիրութեան եւ պայքարի գանձանակի մէջ:

Թղթակից՝ Ադրինէ Իսայեան

ՄԻՋԻՆՔԸ ԾԱՔՆՆԱՎՈՒՄ

Ըստ հայկական օրացույցի պահքի 24-րդ օրը կոչում է «Միջինք»: Այդ օրւայ առթիւ եկեղեցական արարողութիւն չի կատարում, այլ յիշեցում է, որ Մեծ Պահքը հասել է իր կէսին:



Արեւագալի արարողութիւնից յետոյ, Ծահինշահի Հայ Կանանց Եկեղեցասիրաց Միութիւնն աւանդաբար կազմակերպում է Միջինքի ճաշկերոյթ, որը բացառութիւն չէր նաեւ այս տարի:

Սկզբում Միութեան նախագահ տկն. Անահիտ Օհանեանը բարի գալուստ մաղթելով ներկաներին որոշ բացատրութիւններ տւեց Միջինքի սովորութիւնների մասին եւ բարի ժամանց մաղթելով հրաւիրեց

րեց ճաշի: Ծահինշահի հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանի օրհնութիւնից յետոյ, ներկաները ճաշակեցին Միութեան անդամուհիների ձեռքով պատրաստած Միջինքի յատուկ կերակուրները: Ներկայ էին նաեւ Համայնքային Վարչութեան անդամները, որոնց կողմից ներկաներին Միջինքի առիթով շնորհաւորեց տկն. Վարդուհի Պօղոսեանը՝ գնահատելով Կանանց Միութեան աշխույժ գործունեութիւնը:

Ճաշկերոյթն անցնում էր մտերմիկ եւ ուրախ մթնոլորտում՝ հայկական ուրախ երգերի հնչիւնների ներքոյ, ասմունքներով եւ երգերով հանդէս եկան ներկաներից եւ անդամուհիներից շատերը: Իր գնահատանքի եւ շնորհակալական խօսքը յայտնեց նաեւ հոգշ. Հայր Սուրբը, որը շնորհակալութիւն յայտնեց Հայ Համայնքի Վարչութեանը, համայնքային աշխատանքներում իրենց հովանաւորութեան եւ աջակցութեան համար եւ խօսքի աւարտին ցանկացաւ բոլորին պահքի յաջորդ բարի շրջան:

Ծրագրի վերջում տեղի ունեցաւ վիճակահանութիւն եւ շահողին նւէր յանձնեց Միութեան ամենատարեց անդամուհի տկն. Խանկերի Սիմոնեանը:

Թղթակից՝ Ադրինէ Իսայեան

Շարունակութիւն՝ 36-րդ էջից

«ԹԱՂԵՈՍ ԹԱՂԵՈՍԵԱՆ» ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ...



նօգեշնչեցին «Թաղէս Թաղէոսեան» Պատանեկան Միութեան անդամ-ուհիների գեղեցիկ կատարումներով: Յեղափոխական եւ հայրենասիրական երգերի կատարմամբ հանդէս եկան՝ Թեմի Մկրտչեանը, Վանա Ծիրանեանը, Դաւիթ Թորոսեանը եւ Ծաբէ Մովսիսեանը, ասմունքներով ելոյթ ունեցան Լաուրա Խուրաբաբախչեանն ու Ծաղիկ Մատթէոսեանը: Գեղարեստական ծրագիրը գեղեցկօրէն ընդմիջւում էր օրւան պատշաճ խօսքերով ու հատուածներով, որոնք ընթերցում էին Վեհանուշ եւ Վահագն Խուրաբախչեանները:

Երեկոն եզրափակեց Միութեան երգչախմբի յեղափոխական երգերի անգլուգական եւ համաշախ կատարումներով:

ՄԱՅՐԵՐԻ ՏՕՆԸ ԵԱՎՆԵԱՎՐՈՒՄ



Շաբաթ՝ ապրիլի 14-ի երեկոյան, Շահինշահրի Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում գերշ. Ս. Բաբգէն եպս. Չարեանի հովանաւորութեամբ Մայրութեան եւ Գեղեցկութեան Տօնի առիթով կազմակերպուել էր հանդէս: Ծրագիրը բաղկացած էր երկու մասից՝ «Նարօտ» երգչախմբի ելոյթը՝ ղեկավարութեամբ հոգշ. Ս. Անանիա վրդ. Գունանեանի եւ հիւրասիրութիւն:

Առաջնորդ Սրբազան Հօր կողքին ներկայ էին արժն. Ս. Վարդան քննչ. Աղաբաբայեանը, Սպահանի Հայոց Թեմի Կրօնական եւ Կրթական խորհուրդների եւ Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչները, Շահինշահրի Համայնքային Վարչութիւնը, Շահինշահրի պատգամաւորները եւ մեծ թուով հիւրեր:

«Նարօտ»-ն արդէն դարձել է Շահինշահրի Հայ Համայնք-ընտանիքի լիիրաւ եւ սիրելի անդամը: «Նարօտ»-ը սիրուել է թէ փոքրերի եւ թէ մեծերի կողմից. այդ էր վկայում լեւի-լեցուն սրահը:

Համերգի սկզբում բացման խօսքով հանդէս եկաւ տկն. Ալլին Քեշիշեանը: Նա բարի գալուստ մաղթելով ներկաներին շնորհաւորեց բոլոր հայ մայրերին եւ նշեց. «Հայ մայրն իր պարզութեամբ եւ պարկեշտութեամբ միշտ ցանկացել է նմանել Ս. Աստուծամօրը: Հայ մայրերի շնորհիւ հայ ընտանիքները դարձել են սրբութեան տաճար, սիրոյ բոյն, հայ հաւատի եւ աստուծային երկիւղի սրբարան, ազգային աւանդոյթների վառ օջախ: Խառնակ այս դարում հայ մօր պարտականութիւնն է հաւատ ներշնչել, յոյս փոխանցել, քրիստոնէութիւն եւ հայութիւն փոխանցել իր գաւակներին»: Իր խօսքն աւարտելով, հաղորդավարը բարի վայելում ցանկացաւ ներկաներին եւ հրաւիրեց դիտելու համերգը:

«Նարօտ»-ի անդամ-ուհիները մեներգերով, զուգերգերով եւ խմբերգերով երգեցին հայ մայրերի գովքը, երգեցին հայ մայրերի անսահման սիրոյ եւ նւիրումի մասին եւ արժանացան ներկաների հիացած եւ երկար ծափողջոյններին: Իսկ համերգի վերջում մի գեղեցիկ անակնկալ էր պատրաստուած. գերշ. Ս. Բաբգէն եպս. Չարեանի գրած բառերով եւ հոգշ. Ս.

Անանիա վրդ. Գունանեանի երաժշտութեամբ մի սքանչելի երգ, որը կատարեց ինքը հոգշ. Հայր Սուրբը: Նրա ձայնը եւ երգի բառերը թափանցեցին իւրաքանչիւր հանդիսականի հոգու խորքը՝ անսահման յուզմունք եւ հիացմունք պարգեւելով:

Տկն. Ալլին Քեշիշեանը «Սրբոց Վարդանանց» դպրոցի ուսուցչական կազմի եւ Ծնողական Խորհրդի անունից շնորհակալութիւն յայտնեց Թեմական Խորհրդին եւ Շահինշահրի Համայնքային Վարչութեանը իրենց մշտական հովանաւորութեան, «Նարօտ» երգչախմբին իր գեղեցիկ ելոյթի համար, երգչախմբին նազազցող պրն. Հարմա Կարապետեանին եւ երգչախմբի Ծնողական Խորհրդին համագործակցութեան համար, տկն. Վոլգա Շահնազարեանին զգեստների ձեւաւորման համար, պրնք. Էմանուել Քամարապարեանին եւ Նորվան Աղախանեանին գեղեցիկ երգեցողութեան եւ պրն. Արգին Չարմահալիին բարձրորակ ձայն ապահովելու համար:

Ծրագրի վերջում իր հայրական խօսքը փոխանցեց գերշ. Ս. Բաբգէն եպս. Չարեանը, նշելով. «Ահաւատիկ «Նարօտ»-ը դարձել է փորձառու երգչախումբ, որն այսօր գեղեցիկ երգերի ծաղկեփունջ նւիրեց մայրերին: Իմ գնահատանքի խօսքն եմ ասում «Նարօտ» երգչախմբի անդամ-ուհիներին եւ յոյսով եմ, որ այս գաւակներն այսպէս մեծանան եւ բարի բերեն ձեզ, մեր ազգին, մեր եկեղեցուն: Գնահատանքի խօսքս եմ ասում նաեւ խմբի ղեկավար Հայր Սուրբին, որը այդքան սիրով եւ նւիրումով աշխատում է եւ մենք վայելում ենք նրա աշխատանքի արդիւնքը: Հայր Սուրբը ո՛չ միայն սովորեցնում է երգել, այլ տեսանք նաեւ, որ ինքն իր քաղցր ձայնով երգում է եւ այդ երգը նւիրում բոլոր մայրերին»:

Ծրագրի աւարտին բոլոր մայրերը հիւրասիրեցին դպրոցի Ծնողական Խորհուրդի կողմից:

Թղթակից՝ Ադրինէ Իսայեան

ԱՏԱՑԻԱԾ ՆԻՒՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայոց Գերեզմանատան Բարեկարգման Յանձնախումբ

- 500,000 ուսուցիչի Մարկոսեան:
- 300,000 ուսուցիչի Սուրեն Մինասեան:
- 200,000-ական ուսուցիչի Ս. Խաչատուր քինյ. Զարգարեան, Յարո Այազեան, Սաքո Յակոբեան, Նորիկ Յարութիւնեան, Սերժիկ Բաղդամեան, Գրիգոր Տէր-Մկրտչեան՝ Նարոյ Իսաղովեանի յիշատակին, Վարդան Ալեքսանդրեան՝ Հիլդա Մարգարեանի յիշատակին:
- 150,000 ուսուցիչի Յարութիւն Յակոբեան:
- 100,000-ական ուսուցիչի Ս. Վաղինակ աւ. քինյ. Ծահիջանեան, Ծաղկուշ Միրզայեան, Ալվարո Զարգարեան, Մասիս Խաչիկեան, Մաղէն Ղարիբեան, Մերի Մինասեանեան, Զանի Ղազարեան, Ղարախանեան ընտանիք, տկն. Ալեքսանդրեան, Այազեան:
- 60,000 ուսուցիչի Վազրդիկ Վարդանեան:
- 50,000-ական ուսուցիչի Համազ Աբրահամեան, Վարդուեան ընտանիք:
- 20,000 ուսուցիչի Օհան Օհանեան:
- 10,000 ուսուցիչի Եսայի Թորոսեան՝ Մաթո Թորոսեանի յիշատակին:

Ն. 2. Հայ Կանանց Գթութեան Միութիւն

- 1,500,000 ուսուցիչի տկն. Փառիսա:
- 500,000-ական ուսուցիչի Արեգնազ Բայաթ, Յուլակ Յարութիւնեան, Ժոզեֆ եւ Ժենիա Իսախանեաններ՝ Հրանուշ Ծահիջանեանի յիշատակին:
- 400,000-ական ուսուցիչի Աթենա Ռահավարդ, տէր եւ տկն. Ռահավարդ:
- 300,000-ական ուսուցիչի Ժերմէն Բաբայեան, Լեւոն Գ. Մինասեան:
- 200,000-ական ուսուցիչի Լուսիկ Մարտոյեան, Մառիկ Մինասեան, Ծաղկուշ Դարթեան:

- 100,000-ական ուսուցիչի Վարդուշ Սարուխանեան, Անահիտ Կիրակոսեան, Փերինազ Օհանեան, Հայկազ Կիրակոսեան, Վանուհի Մովսիսեան:
- 90,000 ուսուցիչի Ֆլորա Ալլահվերդեան:
- Մէկ կայծի վառարան. Լուսիկ Մարգարեան:
- 10 կգ. բրինձ եւ 10 կգ. հալի միս. տէր եւ տկն. Ռահավարդ:
- 10 կգ. գառան միս. տկն. Աբրիշամի:
- 2 կգ. վարենի. Արմինէ Թորոսեան:
- 1.5 կգ. խմորեղէն. տկն. Ծահիբազեան:
- 1 կգ. սուրճ. Աննիկ Օհանեան:

Ն.2. Կիրակնօրեայ Դպրոց

2011-2012 ուս. տարեշրջանի փակման հանդէսի առթիւ

- 500,000 ուսուցիչի Սիսիան եւ Արութիւն Քալանթար Օհանեաններ:
- 300,000 ուսուցիչի Էրիկ Յովսէփեան:
- 200,000-ական ուսուցիչի Ս. Խաչատուր քինյ. Զարգարեան, Քրիստին Մարկոսեան, Լիանա եւ Էրիկ Ղազարեաններ, Նինէ եւ Նարեկ Բարդեաններ:
- 150,000-ական ուսուցիչի Անի եւ Արփի Ղազարեաններ, Մինելիա Մարկոսեան, Էմին Թահմազեան:
- 120,000 ուսուցիչի Լուսին եւ Լիլիթ Յովսէփեաններ:
- 100,000-ական ուսուցիչի Ս. Վարդան քինյ. Աղաբաբեան, Ս. Յովհաննու եկեղեցու Կանանց Հոգեւոր Լսարան եւ «Շուշանիկ» երգչախումբ, Հանրի Հաթաւմեան, Փրենի Թահմազեան, Ադրիանա Գրիգորեան, Մեղրի Փանոսեան, Անիթա Մալիլեան, Նելիանա Գրիգորեան, Ռենիա Ծատուրեան, Գայիանէ Մինասեան, Մելիսա Դարթեան, Անիսա Զոհրաբեան, Էմի Մկրտչեան:
- 50,000 ուսուցիչի Արութիւն Առաքելեան:

Առաջնորդարանին, կրօնական արարողութիւններին եւ ազգային կառույցին առնչուող լուրերն ու թղթակցութիւնները պատրաստել է Ազգային Առաջնորդարանի Հանրային Կապի գրասենեակը, «Արարատ» Միութեան առնչուող լուրերը՝ օրդերանուշ Թահմազեանը, համայնքային լուրերը՝ «Ալիք»-ի թղթակիցները, իսկ Շահինշահրի հայ համայնքին վերաբերող տեղեկութիւնները՝ տկն. Ադրինէ Իսայեանը:

«Ալիք»-ի թղթակցութիւնների եւ մի շարք ծրագրերի լուսանկարները տրամադրել է Գեւորկ Խաչատրեանը:

ՄԵՐ ՀԱՍՅԵՆ

خليفه گري ارامنه جلفای اصفهان و جنوب
ایران
صندوق پستی ۸۱۷۳۵/۱۱۵

Armenian Cathedral - P.O.Box 81735-115
New - Julfa, Isfahan, Iran

E-mail: Sourbv@Yahoo.com

Tel: +98-311-6243471-2
Fax: +98-311-6270999

